



ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ՉԵԼԱՆՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

# ՓԱՐՈՍ *Paros*

ISSUE 95 JUNE / ԹԻՒ 95 ՅՈՒՆԻՍ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ  
ԺԱՄԱՆՈՒՄ ՍԻՏՆԻ, ԱՄՍՏՐԱԼԻԱ



## Թեմական Լուրեր

**ԳԶ., 3 Յունիս** – Նիւ Սաութ Ուելզի Էքիմենիք Խորհուրդի հրաւերով տեղի ունեցաւ անդամ եկեղեցիներու պետերուն հերթական ժողովը: Այս ժողովը կը գումարուի տարին երկու անգամ իրազեկելու համար եկեղեցապետերը անցուդարձերու մասին: Վարդան Սրբազանը ներկայացուց դիւանապետ Նշան Սարկաւազ Պասմաճեանը:

Դիւանապետը հակիրճ տեղեկութիւն տուաւ Աւստրալիոյ եւ

ՆԶԻ Հայոց Թեմին գործունէութեան մասին եւ փոխանցեց Վարդան Սրբազան հօր օրհնութիւնը ներկաներուն:

Ժողովը լսեց տեղեկութիւններ բոլոր եկեղեցիներէն:

Նորանշանակ Ընդհանուր Քարտուղար Բոտ Պէնսըն Քահանան հրաւիրուեցաւ նորընտիր Նախագահ Քարմէլ Իերիչի Քահանայուհիի կողմէ ներկայացնելու վերջին վեց ամիսներու Խորհուրդին տարած աշխատանքը, որ մեծապէս գնահատուեցաւ ժողովին մասնակիցներուն կողմէ:

Սովորութիւն է այս ժողովներուն հրաւիրել անձ մը ներկայացնելու համար հրատապ անցուդարձ մը աշխարհի մէջ որ կը հետաքրքրէ եւ կը մտահոգէ Խորհուրդս: Այս անգամ հրաւիրուած էր Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբի գործադիր տնօրէն Պրն Մայքըլ Գոլոգոսեանը, որ ժողովին մասնակցեցաւ ընկերակցութեամբ

Յանձնախումբի անդամ Պրն Սեպասթիան Նաճարեանի:

Մայքըլ Գոլոգոսեան մանրամասն բացատրութիւն տուաւ Արցախի մէջ տեղի ունեցած ցեղասպանական արարքներուն մասին, կատարեց պատմականը Ատրպէյճանի կատարած անմարդկային արարքներուն, ծանրանալով եկեղեցական

եւ մշակութային կոթողներու, եկեղեցիներու եւ վանքերու Ատրպէյճանի կողմէ գետնին հաւասարեցման կամ մզկիթի վերածման եւ կամ զանոնք Կովկասեան Ալպանիոյ պատկանող շինութեանց վերագրման: Ան ցոյց տուաւ արբանեակէն առնուած նկարներ Արցախի բռնագրաւումէն առաջ եւ ետք: Երկու երիտասարդները մեծապէս տպաւորեցին ժողովականները իրենց գիտելիքներով, վերլուծումներով եւ յանուն արդարութեան իրենց պայքարի ոգիով: Բազում հարցումներուն անոնք ճշգրտօրէն պատասխանեցին եւ համոզիչ պատճառներ տուին:

Ժողովը միաձայն համաձայն եղաւ Առաջնորդարանին հետ համադրելով, աջակցիլ Հայ Դատի Յանձնախումբին տարած աշխատանքներուն յօգուտ Արցախի եւ Հայաստանի, մանաւանդ Աւստրալիոյ պետութենէն պահանջելով սատար հանդիսանալ եւ Ատրպէյճանի վրայ ճնշում բանեցնել որ անխաթար մնան Արցախի մշակութային եւ կրօնական ժառանգութիւն յուշարձանները եւ ապահովելու անվտանգ վերադարձն ու բնակութիւնը բռնի դուրս դրուած արցախահայութեան:

Առաջնորդարան – Համայնքային եւ Էքիմենիք հաստատութիւններ համագործակցութիւնը Թեմական Խորհուրդի նախընտրութիւն եղած է: Այս օրուան եկեղեցապետերու ժողովը գործնական արտայայտութիւն մըն էր:



**Ուրբ 13 Յունիս** - Հարաւային կիսագունդին մէջ Եկեղեցական Համաշխարհային Խորհուրդի նախաձեռնած «Աղօթք Քրիստոնէական Միասնութեան» համար ամենամեայ ձեռնարկը տեղի կ'ունենայ Հոգեգալուստի շրջանին: Նահանգային մաշտապով, ամեն տարի այդ ձեռնարկը կը կազմակերպէ Նիւ Սաութ Ուելլզի Էքիւմէնիք Խորհուրդը (NSWEC): Այս տարուան աղօթքը ձօնուած էր Նիկիական Հանգանակի (Հաւատամք) 1700-ամեակին եւ կազմակերպուած Ղպտի Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցոյ կողմէ St Anthony and St Paul Coptic Orthodox Church-ի մէջ՝ Guildford արուարձանին մէջ: Արժ Տէր Աւետիս Քահանայի, Բարեշնորհ սարկաւազներ Պօղոս Քէլէշեանի, Նշան Պասմաճեանի եւ Ղպտի քահանայ Եուսէֆ Ֆանուսի համագործակցութեամբ ի գործ դրուեցաւ գեղեցիկ արարողակարգ մը: Պօղոս Սարկաւազի գլխաւորութեամբ Բարեշնորհ Սարկաւազներ Վարդան Էլմասեան, Վարդան Քէօշքերեան եւ Գրիգոր Սեդրաքեան երգեցին «Ով Հրաշալի Նախահարք»ը եւ «Հաւատոյ Հանգանակ»ը երկուքն ալ Հայերէն լեզուով: Ապա արտասանուեցաւ Հաւատոյ Հանգանակը ղպտի բարբառով եւ անգլերէնով: Առաջին Կորնթացոց Թուղթը (12: 12-20) ընթերցեց Եուսէֆ Քահանան, իսկ Աւետարանը՝ (Յովի 12: 14-26) Տէր Աւետիս Քահանան:

Իրենց մասնակցութիւնը բերին նաեւ սարկաւազներ եւ հոգեւոր հովիւր Եթովպական Ուղղափառ Եկեղեցոյ, որոնց ծիսկատարութիւնը թմբուկով եւ ծնծղաներով համեմուած էր:

Քարոզը տուաւ Գերաշնորհ Տանիէլ Ղպտի Եպիսկոպոսը:

Ան ըսաւ որ առաջին Էքիւմէնիք ժողովը տեղի ունեցաւ Նիկիոյ մէջ 325 թուականին: Շատ մը պատճառներ կային այդ ժողովը գումարելու, սակայն գլխաւոր պատճառն էր Արիոսի աղանդաւորութիւնը: Արիոս ծնած էր Լիպիա 250 թուականին եւ մահացաւ Պոլսոյ մէջ՝ 336-ին: Ան Աղեքսանդրիոյ մէջ Քրիստոնէայ հոգեւորական մըն էր եւ կը հաւատար որ Քրիստոս, որդի Աստուծոյ, հաւասար չէր Հօր եւ Ան Աստուծոյ հետ յաւիտենական եւ Աստուծոյ հետ համագոյ չէ, նոյնիսկ Աստուածային չէ այլ ստեղծուած արարած: Արիոս իր ուսուցումները կը հիմնաւորէր կարգ մը Աստուածաշնչեան գրութեանց վրայ: Անոր ուսուցումներուն ի հետեւանք մեծ բաժանումներ տեղի ունեցան եկեղեցոյ ինչպէս նաեւ Հռովմէական կայսրութեան մէջ:

Երեք հոգեւորականներ ընտրուեցան շարադրելու համար Նիկիական Հանգանակը, որոնցմէ երկուքը Ղպտի էին, յանձինս՝ Աղեքսանդր 19րդ Պապին եւ անոր սարկաւազ՝ Աթանասին: Այս վերջինը ինք էր որ ձեւաւորեց Հանգանակը:

Աղեքսանդր Պապն ու ընկերակցող 20 եպիսկոպոսներն ու Աթանաս սարկաւազը մեծ դերակատարութիւն ունեցան պաշտպանելու Քրիստոնէական անխաթար հաւատքը նախքան Նիկիոյ







Տիեզերական Ժողովը (325 Թուական): Անոնք Աղեքսանդրիոյ մէջ համագումար մը կազմակերպեցին մասնակցութեամբ 44 եպիսկոպոսներու եւ 44 սարկաւագներու եւ անոնք դատապարտեցին Արիոսը եւ ստորագրեցին փաստաթուղթ մը:

Տանիէլ Եպիսկոպոս յորդորեց որպէս եկեղեցիներ պահել Նիկիական Հանգանակը, անտեսելով ամէն տեսակի հալածանք:

Ասոր համար խիստ կարեւոր է ունենալ վանական զօրաւոր շարժում եւ դաստիարակել վանական հայրեր խոր գիտելիքներով: Սուրբ Անտոնիոս, վանականութեան հիմնադիրը, երկու անգամ այցելեց Աղեքսանդրիա, զօրաւիգ կանգնելու համար Աթանաս Պապին ընդդէմ Արիոսի: Տանիէլ Եպիսկոպոս նաեւ յորդորեց եկեղեցապետերը ամէն ճիգ ի գործ դնել վանական կեանք ստեղծել կիներու համար, պատրաստել մայրապետներ եւ զանոնք դաստիարակել ճիշդ գիտելիքներով: Արիոս կարողացաւ 700 կոյսեր օծել որպէսզի անոնք իր սխալ ուսուցումները քարոզեն...

Տանիէլ Եպիսկոպոս ըսաւ, ապահովելու համար քրիստոնէական միասնութիւն՝ եկեղեցապետեր պէտք է ուղիղ

կապեր հաստատեն իրարու միջեւ: Անոնք հարկ է որ հանդիպին իրարու շարունակաբար եւ հերթականօրէն, դիմագրաւելու մարտահրաւերներ: Էքիւմէնիք Խորհուրդներ կրնան իրենց օգտակարութիւնը բերել: Այս հանդիպումները պէտք է ներառեն նաեւ երիտասարդութիւնը: Այսօր անաստուածներու թիւը մեծ է, իսկ մեր առաքելութիւնն է՝ պայքարիլ եւ զանոնք վերադարձնել հաւատքի:

«Միբելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս, Այսօր կը տօնենք 1700-ամեակը Նիկիական Հանգանակին: Ան մեզի կը յիշեցնէ խորունկ իրականութիւնը որ մեզ կը միացնէ իրարու: Այդ իրականութիւնն է՝ «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ»:

Թող Աստուած օրինէ ձեզմէ իւրաքանչիւրը, թող Քրիստոս բնակի մեր մէջ եւ թող Սուրբ Հոգին առաջնորդէ մեզ եւ զօրացնէ մեզ մեր միասնութեամբ», եզրակացուց Տանիէլ Եպիսկոպոս:

Միասնական աղօթքէն անմիջապէս ետք, կողքի սրահին մէջ տեղի ունեցաւ աւանդական դրամահաւաքի



ճաշկերոյթը, կազմակերպութեամբ NSWEC Fundraising Commission-ին որուն վերջին եօթ տարիներու ատենապետն է Դիւանապետ Նշան Պասմաճեան: 180 ներկաներու վրայ 50-ը Հայեր էին, որոնց կարգին՝ Արժանապատիւ Քահանայ հայրեր՝ Տէր Աւետիս Համբարձումեան, Տէր Միւռոն Աւետիսեան, Տէր Աշոտ Աբրահամեան, ինչպէս նաեւ Վերապատուելի Գրիգոր Եւմուշաճըքեան: Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան հայրը կը ներկայացուէր Թեմականի փոխատենապետ Պր. Ստեփան Գրգեաշարեանի կողմէ: Նշան Պասմաճեանի բարի գալուստի խօսքէն ետք Շնուտա Քահանան օրինեց սեղանը որ ճոխացած էր

Միջին Արեւելեան խոհանոցի ճաշատեսակներով:

Հանդիսավարութիւնը կատարեց Էքիւմէնիք Խորհուրդի նորանշանակ նախագահ, Եունայթիմ Եկեղեցւոյ Քարմէն Իերաշի քահանայուհին:

Սովորութիւն է դրամահաւաքի այս ճաշկերոյթներուն հրաւիրել բանախօս մը: Այս տարուան էր Բոտ Պէնսըն քահանան նորանշանակ ընդհանուր քարտուղարը Էքիւմէնիք Խորհուրդին:



Բոտ Պէնսըն նիւթ ընտրած էր «Միացման Ուղին»: Ան հարց տուաւ թէ ի՞նչ կը հասկնայինք Էքիւմէնիզմով: «Պարզ ասած, Էքիւմէնիզմը համաշխարհային շարժում մըն է դէպի քրիստոնէական միութիւն եւ համագործակցութիւն Քրիստոնէայ տարբեր մշակոյթներու եւ

յարանուանութեանց միջեւ: Շարժումը կը միտի յաղթահարելու եկեղեցական բաժանումները, ամոքելու անոր վերքերը եւ միասին աշխատելու հաւատքով, աղօթքով եւ Աւետարանի քարոզչութեամբ»:

76 տարի առաջ, 1949-ին, նոր աշխարհ մը որ նոր դուրս եկած էր արինահոսութենէն եւ Համաշխարհային Բ Պատերազմի քաոսային վիճակէն, Անկլիքան աստուածաբան Օլիվըր Թոմքինս կը գրէր... «Էքիւմէնիզմի խորքը, Էքիւմէնութիւնը, բան մըն է որ տեղի կ'ունենայ Քրիստոնէաներու հոգիներուն մէջ: Նոր հասկացողութիւն մըն է այս Քրիստոսի Մարմնին, որ պիտի չարտօնէ ոեւէ մէկուն որ ճնշման տակ է բաժանում ստեղծելու»:

Ապա ան մէջբերեց Քրիստոսի աղօթքը յիշուած Յովհաննէս 17:21-ի մէջ. «*Որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն Հայր՝ իմ մէջս ես ու ես՝ Քու մէջդ, որ անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ թէ Դուն դրկեցիր զիս*»:

Շարունակելով, ան ըսաւ « ուրեմն միասին աղօթելու եւ ծառայելու կոչը կու գայ Քրիստոսի բերանէն եւ Աստուծոյ սրտէն: Մենք ատոր կը վերադառնանք այսօր. հաւաքուած ենք միասին աղօթելու եւ ճաշ բաժնելու իրարու հետ, այսպիսով գործակիցներ կը դառնանք եւ մասնակից Քրիստոնէական միասնութեան»: Միասին մենք աւելի լաւ ենք:



Պէնսըն քահանայի ամբողջական խօսքը կարդալ անգլերէն բաժինին մէջ:

Յանուն երիտասարդութեան խօսք տրրւեցաւ երկու երիտասարդներու՝ Պօղոս Սարկաւազ Քէլէշեանի (Հայ Առաքելական) եւ Թուրա Կիրկիսի (Ղպտի ուղղափառ):

Իր խօսքին մէջ Պօղոս Սարկաւազ ըսաւ.

«Իր Ազգապատում գիրքին մէջ Մաղաքիա Պատրիարք Օրմանեան կը գրէ հետեւեալը.

«*Ի սկզբանէ Քրիստոնէութիւնը որպէս հաւաքական մարմին առաջ եկաւ. եւ այդ հաւաքական կամ ժողովական միութիւնը՝ Եկեղեցի անունով նշանակուեցաւ, որ է ժողով կամ ժողովուրդ, զի ոչ միայն վարդապետութեան, այլ եւ պաշտամունքի եւ կենցաղի եւ իշխանութեան կենսական տարրերով միաւորուած ու կապուած էր*»:

Շարունակելով, Պօղոս Սարկաւազ կատարեց կարելորդ հարցադրում մը ըսելով. «Ես յաճախ կը զարմանամ աստուածաբանական տարբերութեանց, որոնք գոյութիւն ունին եկեղեցի-

ներու միջեւ եւ հարցում մը կայ որ կ'ուզեմ ուղղել ձեր բոլորին առ ի խորհրդածութիւն. Եթէ սրտերը



քարացած ըլլան եւ սէրը պակսած ըլլայ մեր եղբօր նկատմամբ, դրժելով երկրորդը տասնաբանեայ պատուիրաններուն, եւ որոնց պատճառներն ըլլան մեր աստուածաբանական տարբեր ըմբռնումները, արդեօք այդ ապացոյց չէ մեր Քրիստոնեայի էութեան եւ կոչումին ձախողութեան...»:

Խորհմաստ այս հարցադրումով իր խօսքը փակեց սարկաւազը:

Երեկոն ճոխացուցին Համագգայինի Սիտնի Պարի Անսամբլի երկու պարուհիներ՝ Էօթէնի եւ Նարօտ Օրանճեան քոյրերը ինչպէս նաեւ **Sydney Hindi Uniting Church Faith Community Choir** երգչախումբը: Տեղի ունեցաւ վիճակահանութիւն:

Երեկոն քրիստոնէաբոյր շարունակութիւնն էր Էքիմէնիք աղօթքին:

## ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**Յունիս 16-ին**, առցանց տեղի ունեցաւ Թեմի հոգեւորականաց կրօնական ժողովը՝ նախագահութեամբ

Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի: Ժողովին ներկայ էին Թեմի բոլոր օծեալ հոգեւորականները: Ժողովը ընթացաւ ջերմ եւ կառուցողական մթնոլորտի մէջ: Քննարկուեցան Թեմական կեանքի կազմակերպչական յստակեցման եւ ներքին զարգացման մի շարք առանցքային ուղղութիւններ, ինչպէս նաեւ ճշդուեցան առաջիկայ ընելիքները:



**Քննարկուող գլխաւոր կէտերն էին՝**

- Թեմի Կրօնական Ժողովի Կանոնակարգի կազմութեան յանձնախումբի ձեւաւորում
- Թեմի Ծիսական Հարցերու յանձնախումբի ստեղծում
- Թեմի Հովուական Ծուխերու կազմութեան ձեւաչափի մշակման յանձնախումբի ձեւաւորում
- Յառաջիկայ քայլերու եւ ընելիքներու ծրագրաւորման գործընթաց

Ժողովը ընթացաւ կառուցողական ոգիով՝ ուղղուած Թեմական կեանքի արդիականացման, եւ հոգեւոր ծառայութեան աւելի համակարգուած եւ արդիւնաւետ մակարդակի բարձրացման:



**Շբ., 21 Յունիս** – Չացուուտ արուարձանի Քոնքորս հանդիսութեանց սրահը ծայրէ ծայր լեցուած էր հանդիսատեսներով, որոնք եկած էին տօնակատարելու Համագգային Սիտնի Պարի Անսամբլի հիմնադրութեան 25-ամեակը:

Երեկոյի ընթացքին ներկայացուեցան պարային շքեղ ներկայացումներ 4 էն մինչեւ 18+ տարիքներու 175 երկսեռ պարողներու կողմէ: Ներկայացուեցան Ալաշկերտի Քոչարի, Արմէնի, Ծիրանի, Քամին Զանա, Լորգէ, Մշոյ Աղջիկ, Կարին Ֆինջան, Նինօ, Հայաստան, Թամգարա, Արցախի Ծնունդ Եմ, Երկիր Նայիրի, ազգագրական պարերը: Իր ասմունքով հանդիսատեսները հրապուրեց Տիկին Զանի Նազարեան – Օգճեան, արտասանելով «Սասունցիների Պարը»:



Անսամբլի խնամակալութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր գործակից հրաւիրելու Համագգային Արշակ եւ Սօֆի Գօլստըն Ճեմարանի աշակերտները: 64 աշակերտներ, գլխաւորութեամբ

ուսուցչուհի Պէթի Մարաշլեանի եւ խմբավար Փէրի Մինասեանի ներկայացուցին հայկական երգերու շարք մը, որոտընդոտ ծափեր խլելով ներկաներէն:

Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներու կողքին Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը կը ներկայացնէր Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը: Ներկայ էին նաեւ քահանաներ՝ Արժ Տէր Միւռոն Աւետիսեան եւ Արժ Տէր Աշոտ Արքահամեան:

Իրենց գնահատանքի խօսքերը արտասանեցին Անսամբլի Խնամակալութեան Խորհրդատու Մարմնի ատենապետուհի Տիկին Հանրիէթ Անդրիասեան, Համազգային Շրջանային Վարչութեան ատենապետ Պրն Գեորգ Վարդանեան: Առաջնորդ Սրբազան հայրը Ս. Էջմիածնէն ղրրկած էր իր պատգամը, զոր ընթերցեց Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Ստորեւ կը հրապարակենք զայն ամբողջութեամբ:



Բոլոր խօսք առնողները բարձր գնահատեցին 25 տարի առաջ Անսամբլի մտայղացումը կատարած եւ ցայսօր անոր նախագահութիւնը ստանձնած Հարմիկ Յակոբեանի տեսլականն ու բժախնդիր, յարատեւ եւ անշահախնդիր աշխատանքը:

## Առաջնորդ Սրբազան Հօր Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի Պատգամը Համազգային Միտնի Պարի Անսամբլի 25-ամեակին Առիթով

*Երբ կը թերթատենք Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կանոնագիրը, դէմ յանդիման կու գանք հետեւեալ պարզ բայց խորիմաստ ու պարտաւորեցնող բացատրութեան՝ առնչուած Համազգայինի նպատակին.*

*«ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ նպատակն է՝ պահպանել, զարգացնել ու տարածել հայ մշակոյթը եւ կրթութիւնը՝ Հայաստանի ու համայն հայութեան գոյատեւման առաքելութեամբ»:*

*Այս տարրուան ընթացքին երեք առիթներով պիտի նշուի 25 տարի շարունակ «Հայ մշակոյթը պահպանող, զարգացնող ու տարածող» Համազգային Միտնի Պարի Անսամբլի հիմնադրութեան 25-ամեայ յոբելեանը:*

*Համազգայինի վեհ նպատակներուն անշեղ գործադրութիւն է Հարմիկ Յակոբեանի եւ իր շուրջ հաւաքուած մի քանի համազգայնականներու կողմէ հիմնադրումը Անսամբլին: Հիմնադիր խմբակը քաջ գիտէր որ հայկական պարը պիտի ներշնչէր Միտնիաբնակ Հայ երիտասարդութիւնը եւ մեծ նպաստ պիտի բերէր մշակութային զարգացման գործընթացին:*

*Եւ այսպէս, Միտնի Պարի Անսամբլը, քսանհինգ տարիներու ընթացքին, բարձրացաւ Հայ մշակոյթի զարգացման սանդխամատերն ի վեր եւ հրապուրեց սերունդներ կառչելու անոր: Կարելի չէ չգմայլիլ Անսամբլի 25-ամեայ ձեռքբերումներուն վրայ, որուն հիմնումը տեղի է ունեցած օտար ափերու մէջ եւ տնօրինուած կամաւորներու միջոցաւ, Հայո՛ւն վայելող բարի կամեցողութեամբ:*

*Գնահատելի երեւոյթ է այսօրուան համերգին համատեղ մասնակցութիւնը տեսնել Համազգային Գօլստըն Ճեմարանի երգչախումբին: Գովելի՛ նախաձեռնութիւն, որուն միջոցաւ Հայ մշակոյթի երկու կարեւոր բաղադրիչները, երգն ու պարը, միասնաբար պիտի ներկայանան հանդիսատեսին, մշակութային դաստիարակութեան մեծ փորձառութիւն տալով զանոնք կատարողներուն:*

*21 Յունիս 2025-ին «Մեր Արմատներու Ռիթմեր»-ով սկսած յոբելենական հանդիսությունները պիտի շարունակուին 26 Հոկտեմբերի եւ 2 Նոյեմբերի միջոցառումներով: Անոնք պիտի փոթորկեցնեն մեր հոգիները եւ յաւէտ լսելի պիտի դարձնեն Հայ Արմատներուն Դորդոցը Աւստրալահայ սերունդներուն մտքերուն մէջ:*

*Յաջողութեան եւ յարատեւութեան ամենալաւագոյն մաղթանքներով,  
Հայրական Օրհնութեամբ՝*

*Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան  
Առաջնորդ  
Մայիս 2025*

**Դժ., 25 Յունիս** – Առաջնորդարանի կազմակերպած 41րդ առցանց դասախօսութեան նիւթն էր «Եկեղեցի-Պետութիւն Յարաբերութիւններ եւ Արդի Հիմնախնդիրներ»: Դասախօս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիւանապետ, Գերաշնորհ Տէր Արշակ Արքեպիսկոպոս Խաչատրեան:

Սրբազան հայրը հակիրճ բացատրութիւն տուաւ Մայր Աթոռ – Պետութիւն դարաւոր յարաբերութեան, ինչպէս նաեւ Վարչապետ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան գլուխ գալէն ետք հետզհետէ վատթարացող յարաբերութեանց մասին: Նոյն օրը տեղի ունեցած էր «Սրբազան Պաշար» շարժման ղեկավար Գերաշնորհ Տէր Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանեանի եւ անոր մասնակիցներէն ոմանց ձերբակալութիւնը:




Արշակ Սրբազան կատարեց պատմականը թէ ինչպէս յարաբերութիւնները հետզհետէ վատթարացան, 2019-ին Հայ եկեղեցւոյ պատմութիւն նիւթի վերացում կրթական ծրագրէն, այլ կրթական հարցեր, մեղադրանք Սուրբ Էջմիածնի եւ ընդհանրապէս եկեղեցւոյ հարկային պարտաւորութիւնները չկատարելուն մէջ, մեղադրանք որ եկեղեցին քաղաքականութեան մէջ կը մտնէ, որը պէտք չէ ընէ, մեղադրանք թէ եկեղեցին քոռութեամբ է, թէ եկեղեցականները սրբապիղծ են եւայլն: Սրբազանը հերիւրածոյ գտաւ եւ ըսաւ որ եկեղեցին հարկային բոլոր պարտականութիւնները օրին կը կատարէ: Ան զերծ կը մնայ հարկերէ այն գոյքերուն համար, որոնք ունին պաշտամունքային նշանակութիւն, օրինակ սրբավայրեր, որոնք հարիւրաւոր կամ հազարաւոր տարիներու պատմութիւն ունին: Ան բացատրեց թէ եկեղեցին քաղաքականութեան մէջ չի մտներ այլ իր առաքելութիւնն է իր ժողովուրդին անվտանգութեան եւ բարօրութեան համար պահանջք ներկայացնել եւ իր ազգին ու ժողովուրդին բարօրութեան համար չի կրնար լուռ մնալ: Քոռութեամբ մասին ըսաւ որ առանց փաստերու զուտ քարոզչական լոգունգներ են որոնք հրապարակ նետուած են: Պետութեան առջեւ ամէն ինչ բաց դրուած է առ ի ստուգում: Եւ թէ սրբապիղծ են հոգեւորականները, ան ըսաւ եթէ նոյնիսկ կարգ մը հոգեւորականներ որպէս մարդ սայթաքումներ ունեցած են, սակայն ոեւէ մէկուն դէմ քրեական ոչ մէկ մեղադրանք գոյութիւն ունի:

Արշակ սրբազան ըսաւ որ եկեղեցական ըլլալով չի նշանակեր սխալներ չգործել, բնական է այդ, բայց եկեղեցականը պէտք է ըլլայ ՏԱՐԲԵՐ եւ ձգտի կատարելութեան: Հետեւաբար այս կառավարութեան նպատակն է արժեզրկել եկեղեցւոյ առաքելութիւնը:

Սրբազանը վերօրինակ յայտարարութիւնները պատահական չգտաւ, ան ըսաւ որ 10 օր առաջ Ատրպեյճանի հոգեւոր առաջնորդ Ալլահշիւքիւր Փաշազատէն նմանօրինակ յայտարարութեամբ հանդէս եկած էր, ըսելով թէ Էջմիածինը սպառնալիք էր տարածաշրջանին համար...:



Արշակ Սրբազան հաստատեց որ այս դժուար օրերուն, երբ կատարապէս վտանգ կը սպառնայ երկրին, կառավարութիւնը փոխանակ համախմբելու ազգը զայն



կատակտելու ետեւէն է եւ նպատակն է եկեղեցին ներկայացնել որպէս հակապետական կառոյց: Վարչապետը հանրային քարոզչութեամբ ատելութիւն կը սերմանէ: Եկեղեցւոյ առաքելութիւնն է ժողովուրդին արժանապատուութիւնը վեր պահելը:

Սրբազանը խրատեց որ սփիւռքահայ համայնքները կապը պահեն հայրենիքին հետ եւ յիշեցնել պետութեան որ իրենք երկրի տէրերը չեն այլ անոր սպասաւորները, որոնց պարտականութիւնն է յառաջ տանիլ զայն այլապէս, եթէ հնարորութիւն չունին այդ ընելու՝ պէտք է հրաժարին:

Արշակ Սրբազան պատասխանեց ակնդիրներու կարգ մը հարցերուն:

Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան, որ տակաւին Սուրբ Էջմիածին կը գտնուէր, կատարեց փակման խօսք, ուր շնորհակալութիւն յայտնեց Արշակ Սրբազանին, բոլոր մասնակիցներուն եւ բոլոր անոնց, որոնք յաջողցուցին այս ձեռնարկը: Խօսելով Արշակ Սրբազանին մասին ան ըսաւ որ եկեղեցի-պետութիւն յարաբերութեանց ամենէն բանիմաց եւ փորձառու անձն է ան, որովհետեւ դեռ 2000 թուականէն ան այս աշխատանքներուն մէջն է:

Վարդան Սրբազան պատմական ակնարկ մը նետելով եկեղեցի – թագաւորներ յարաբերութեանց վրայ ըսաւ որ տարակարծութիւններ եղած են ա՛յն ատեն միայն, երբ եկեղեցին եղած է ազգային արժէքներու պահպանութեան ռահվիրան եւ այդ արժէքներուն համար իր ձայնը բարձրացուցած է, բան մը որ իր իսկ առաքելութիւնն է:

Սրբազանը յստակօրէն բացատրեց որ Հայ հոգեւորականը Քրիստոսի կը ծառայէ ժողովուրդին ճանապարհով, որովհետեւ ժողովուրդին բոլոր ապրումները եկեղեցւոյ կը պատկանին, անոնց դժուարութիւններն ալ անորն են, հետեւաբար եկեղեցին պարտաւորութիւն ունի այդ դժուարութեանց համար իր խօսքը ըսելու եւ անոնց լուծման համար աշխատելու:



Ան խրատեց որ աւստրալահայ համայնքը իր դերակատարութիւնը պէտք է ունենայ եւ անտարբեր չըլլայ Հայաստանով եւ Հայ եկեղեցիով, «որովհետեւ եկեղեցին բոլորս ենք եւ բոլորս հոգեւոր պարտաւորութիւն ունինք աղօթելու մեր հայրենիքին համար եւ խնդրելու Տիրոջմէ իմաստութիւն մեր երկրի ղեկավարութեան համար իրենց ծառայութեան մէջ» եզրակացուց Սրբազանը: Ապա աղօթքով փակեց ձեռնարկը, որմէ մի քանի ժամ ետք ճամբայ ելաւ դէպի Սիւնի:

Ստորեւ՝ հակիրճ կենսագրութիւնը Արշակ Սրբազանին:

**Աւագանի անունով՝ Սամվէլ, ծնած է 1973-ին, Արմաւիրի Ոսկեհատ գիւղին մէջ:**

**1990-1996 կը յաճախէ Գեորգեան հոգևոր ճեմարան՝ Ս. Էջմիածին:**

**2003-2007 թթ. – Երեւանի Պետական Համալսարանի Իրաւաբանութեան Դպրոց, ուր կը կը վկայուի որպէս իրաւաբան:**

**1996-ին՝ սարկաւազ, 1997-ին՝ կուսակրօն քահանայ, 2001 ին՝ վարդապետ:**

**2004-ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս: Իսկ 2023-ին կը ստանայ Արքութիւն:**

**1999 – «Էջմիածին» ամսագրի գլխաւոր խմբագրի պաշտօնակատար:**

2000 - «Մայր Աթոռ-թեմեր» գրասենեակի վարիչ-տնօրեն:

2001 - Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիւանապետ, զոր ձեռնհասօրէն կը վարէ մինչեւ օրս:

2003-2005 - Գերագեան հոգևոր ճեմարանի դասախօս «Հին Կտակարանի մեկնութիւն», «Վարք Սրբոց» եւ «Եկեղեցական երաժշտութիւն» նիւթերու:

2004 ին ան Մայր Աթոռի ներկայացուցիչն է ՀՀ Ազգային Ժողովին մէջ:

2004էն ի վեր Գերագոյն հոգևոր խորհուրդի անդամ է:

Սրբազան հայրը հեղինակ է հետեւեալ գիրքերուն.

«Նուիրակութիւնը Հայոց եկեղեցում», 2004, «Սուրբ Էջմիածինը և Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը հայ մատենագրութեան մէջ», 1999, «Որոնումներ...» 2019 :

Ուրբ., 27 Յունիս – Սիտնիի միջազգային օդակայանի սպասման սրահին մէջ, վաղ առաւօտուն, աւելի քան 50 հայորդիներ հաւաքուած էին, ոմանք ծաղկեփունջերով, ուրախութեամբ դիմաւորելու հոգևոր անձնաւորութիւն մը, զոր վաղուց կը ճանչնային եւ այսօր կը ժամանէր ստանձնելու համար թեմիս Առաջնորդի պաշտօնը: Այդ անձը Սիտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ երբեմնի (2005-2008) հոգևոր հովիւ Հայր Վարդանն էր, իսկ այսօր՝ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը, Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին եւ Հայրապետական Պատուիրակ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի:



Եւ վերջապէս Սրբազան հայրը դուրս կու գար: Ողջագուրում, բարեմաղթանքներ, ուրախութեան արցունքներ...

Հայկական տարագրով զինք դիմաւորեց երիտասարդուհի մը, ձեռքերուն մէջ՝ աղ ու հաց: Սրբազան հայրը, ըստ հայկական սովորութեան, օրհնեց զանոնք: Դիմաւորողներու շարքին էին Քահանայ հայրեր Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցիներէն, Թեմական, Ծխական Խորհուրդներու անդամներ, Սրբազան հօր երբեմնի գործակիցներ, ընկերներ ու բարեկամներ:

Նախօրօք յայտարարուած էր առաւօտեան ժամը 8.30-ին Հրաշափառով մուտք Սուրբ Յարութիւն առաջնորդանիստ եկեղեցի, որ տեղի ունեցաւ մասնակցութեամբ Արժանապատիւ Քահանայ հայրերուն, Սուրբ Յարութիւն եւ Սուրբ

Երրորդութիւն եկեղեցիներու սարկաւազաց եւ դպրաց դասի ներկայացուցիչներուն եւ հաւատացեալներուն: Ուրախալի էր եւ գովելի տեսնել տասնեակ մը ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանի աշակերտներու ներկայութիւնը այս արարողութեան:





Արարողութենէն ետք Սրբազան հայրը, շրջապատուած քահանայ հայրերով եւ թեմական, ծխական եւ համայնքային պատասխանատուութիւն ստանձնած հայորդիներով, առաջնորդուեցաւ Առաջնորդարան, ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն Առաջնորդարանի Տնօրէնի Յակոբ Յանձնախումբին կողմէ:

Քսանէ աւելի ժամերու Տոհայի վրայով Երեւանէն թռիչքէն ետք հարկ էր հանգստանալ: Մակայն, ինչպէս մեր բոլոր հոգեւորականները, որոնք յոգնիլ չեն գիտեր, Սրբազան հայրն ալ փաստը տուաւ որ ինքն ալ այդ փաղանգին արժանաւոր մասնիկն էր: Այսպէս, նոյն երեկոյ, ՀՄԸՄ-Անդրանիկ մասնաճիւղի սրահին մէջ հաւաք կար Հայաստանի մէջ տեղի ունենալիք Համա-ՀՄԸՄական Խաղերու մասնակիցներուն եւ ՀՄԸՄ-ի Սկաւտական Յամաքամասային Բանակումին (ԱՄՆ) մասնակիցներուն. Սրբազան հայրը այցելեց հաւաքավայր, քաջալերեց սկաւտները, մաղթեց որ իրենց ընկերութիւնը հիմնուած ըլլայ միշտ անկեղծ սիրոյ վրայ եւ սէրը ըլլայ իրենց յարաբերութեանց առանցքը: Սրբազանը օրհնեց զանոնք եւ անոնց խմբապետներն ու պատասխանատուները, մեծ խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մէջ:



**Շբ., 28 Յունիսի** կէսօրէ ետք ժամը 3-7 գումարուեցաւ Թեմական Պատգամաւորական Ժողովը



նախագահութեամբ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Հօր, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էտկարեան սրահին մէջ, մասնակցութեամբ 45-ի վրայ 39 պատգամաւորներու:

Ժողովը ընտրեց իր դիւանը հետեւեալ կազմով. Պրն Արեգ Եափուճեան՝ Ատենապետ, Տիկին Լարա Տէր Կարապետեան՝ Ատենադպրուհի (անգլերէն), Պրն Ճորճ Նաճարեան՝ ատենադպիր (հայերէն):

Ընտրուեցաւ նաեւ բանաձեւի յանձնախումբ յանձինս Տիկին Ալիս Պաքլայի եւ Տիար Յարութ Օգճեանի: Ժողովին խորհրդակցական ձայնով մասնակցեցան նաեւ դիտորդներ եւ երիտասարդական միութեանց ներկայացուցիչներ:

Արժանապատիւ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան ընթերցեց Վեհափառ Հայրապետին Օրհնութեան Գիրը ուղղուած Պատգամաւորական ժողովին:

Ժողովը վաւերացուց նախորդ Պատգամաւորական ժողովին ատենագրութիւնը, Գերաշնորհ Տէր Հայկազուն Արք Նաճարեան Առաջնորդ Սրբազան հօր իննամսեայ գործունէութեան եւ Մայիս 2024-Մայիս 2025 Թեմական Խորհուրդի գործունէութեան տեղեկագրերը, ինչպէս նաեւ 2024 տարուան նիւթական տեղեկագիրը եւ 2025 տարուան նախահաշիւ/պիւտճէն:

Պատգամաւորական Ժողովը ընտրեց եւ վաւերացուց ֆինանսական տարուան հաշուապահ եւ հաշուեքննիչ ընկերութիւնները:

Ընդառաջելով Սրբազան հօր առաջարկին՝ ժողովը միաձայնութեամբ համաձայն գտնուեցաւ մէկ տարուան համար երկարաձգել շրջանաւարտ թեմական խորհուրդի գործունէութեան ժամանակաշրջանը, մինչեւ Մայիս 16-17, 2026, երբ Մելպուրնի մէջ պիտի գումարուի Թեմական Պատգամաւորական ժողովը:

ԹՊԺ-ի Դիւանին կողմէ հրապարակուեցաւ մամլոյ հաղորդագրութիւն, որուն մէջ ժողովը իր մտահոգութիւնը բարձրաձայնեց վերջին օրերուն Մայր Եկեղեցւոյ եւ Սուրբ Էջմիածնի դէմ հայրենի իշխանութիւններու ձեռնարկած գործողութիւններուն նկատմամբ եւ հաստատեց, որ ներկայ կացութիւնը ներքին եւ արտաքին մեծ վտանգներու դիմաց կրնայ դնել Հայաստանը՝ անդառնալի իրավիճակներու դուռ բանալով: Հաղորդագրութիւնը ամբողջութեամբ կը հրապարակենք ստորեւ:

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**  
**ՀԵՐԹԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ**  
**– 28 Յունիս 2025**

Շաբաթ, 28 Յունիս, 2025-ին, Առաջնորդանիստ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ եւ առցանց, տեղի ունեցաւ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի հերթական Թեմական պատգամաւորական ժողովը (ԹՊԺ), նախագահութեամբ Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Վարդան Եպս. Նաւասարդեանին, ատենապետութեամբ Տիար Արեգ Եսփոստեանի եւ մասնակցութեամբ Թեմի հոգեւորականաց դասուն, Թեմական խորհուրդին, Թեմական համայնքներու Ծխական խորհուրդներու անդամներուն եւ դիտորդ երիտասարդաց վարչութեանց ներկայացուցիչներուն:

ԹՊԺ-ն սկսաւ աղօթքով, որմէ ետք ընթերցուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան գիրը, ապա ժողովականները քննեցին եւ վաւերացուցին Թեմական խորհուրդի միամեայ գործունէութեան (Մայիս 2024 - Մայիս 2025) եւ 2024 տարուան նիւթական տեղեկագիրները: Ժողովը վաւերացուց նաեւ Առաջնորդարանի 2025թ. նախահաշիւը եւ նշանակուեցաւ Հաշուեքննիչ մարմինը:

Առաջնորդ Սրբազան Հօր առաջարկով եւ ԹՊԺ-ին հաստատմամբ Թեմական խորհուրդը մէկ տարուան ժամկետով պիտի շարունակէ իր գործունէութիւնը, մինչ անդամներու հերթական ընտրութիւն:

Ժողովականները հաստատեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ 2026թ. տեղի ունեցող Եկեղեցական Ներկայացուցչական Ժողովին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի ներկայացուցիչներուն ու անձնափոխանորդներուն թեկնածութիւնները:

Ժողովականները իրենց խոր մտահոգութիւնը արտայայտեցին վերջին օրերուն Մայր Եկեղեցւոյ եւ Սուրբ Էջմիածնի դէմ հայրենի իշխանութիւններու ձեռնարկած գործողութիւններուն նկատմամբ եւ հաստատեցին, որ ներկայ կացութիւնը ներքին եւ արտաքին մեծ վտանգներու դիմաց կրնայ դնել Հայաստանը՝ անդառնալի իրավիճակներու դուռ բանալով: Անհրաժեշտ է գերագոյն ճիգ թափել առաջքը առնելու համար նման վտանգալից պայմաններու յառաջացման: ԹՊԺ-ն կոչ ուղղեց Հայաստանի իշխանութեանց ներկայացուցիչներուն անյապաղ դադրեցնել Սուրբ Էջմիածինը եւ Հայ Եկեղեցին վարկաբեկող նման տգեղ լեզուառճով հրապարակային արտայայտութիւնները եւ անդրադառնալ մեր Եկեղեցւոյ անփոխարինելի դարաւոր դերակատարութեան մեր ազգի զաւակներուն եւ մեր ինքնութեան պահպանութեան առաքելութեան մէջ: Անընդունելի է բիրտ ուժի կիրառութեամբ մուտք գործել Սուրբ Էջմիածին եւ Հայոց սրբավայրեր եւ ուժ կիրառել Եկեղեցւոյ ծառայողներուն վրայ:

Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի հերթական Թեմական պատգամաւորական ժողովը իր հաւատարմութիւնը կ'արտայայտէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ աղօթքով կը մաղթէ, որ շուտափոյթ լուծուին առաջացած հարցերը եւ փոխգործակցութեամբ եւ սիրոյ մթնոլորտի մէջ ամենքս լծուինք Հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցւոյ շէնացման եւ պայծառացման աստուածահաճոյ գործին:

Դիւան Թեմական Պատգամաւորական Ժողովի:



**Կիր., 29 Յունիս** – Սրբազան հայրը մատուցեց իր Անդրանիկ Պատարագը Սուրբ Յարութին եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան բազմահարիւր մասնակից հաւատացեալներու: Սրբազան հօր սպասարկեցին Տէր Աւետիս եւ Տէր Աշոտ քահանայ հայրերը: Ան Առաջնորդարանէն Հրաշափառով առաջնորդուեցաւ սարկաւազաց, դպրաց եւ Լուսաւորիչ երգչախումբին կողմէ: Յընթացս Պատարագի, Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, յատուկ ծիսական արարողութեամբ Սրբազան հօր յանձնեց Առաջնորդական Ասան:

Իր անդրանիկ քարոզին բնաբանը Սրբազան հայրը ընտրած էր. «Քանզի ոչ ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք» Հռոմ 6:14

*«Այսօր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հայրերը տնօրինած են որ Ս. Գիրքի այս հատուածը ընթերցուի, ուր Յիսուս եւ Պօղոս Առաքեալ կը խօսին օրէնքի մասին, ըսելով՝ այլեւս օրէնքի տակ չենք այլ շնորհքի:*

*Մատթէոս 12րդի մէջ Յիսուս Շաբաթ օրով կը շրջէր, երբ աշակերտները անօթեցան եւ արտի հասկերէն*



*ժողովուրդին, կարիքաւորներուն, կազմակերպեց մեր եկեղեցւոյ կանոնները, օրէնքները, կարգապահութիւնը, եւ Յիսուսի եւ Անոր հիմնած եկեղեցւոյ առաքելութիւնը հաստատեց եւ զայն հայացուց: Իսկ ի՞նչ ըրաւ Հայ եկեղեցին Հայ ժողովուրդի կեանքին մէջ, եթէ ոչ ստանձնել ժողովուրդի*

*ցորեն քաղեցին ու կերան: Անոնք արժանացան Փարիսեցիներու նկատողութեան թէ Աստուծոյ օրէնքը չէին պահած եւ մեղադրելով Յիսուսը ըսին Անոր, թէ աշակերտները խախտած էին օրէնքը:*

*Յիսուս յանդիմանեց եւ ըսաւ թէ օրէնքը մարդու համար էր, իսկ աշակերտները անօթեցած էին խաղաղութեան, սիրոյ, նուիրումի, հանդուրժողութեան, հաշտութեան պակասէն եւ այդ քաղցր յագեցնելու համար եկած էր Յիսուս:*

*Օրէնքը Աստուծոյ կողմէ սահմանուեցաւ որ մեր կեանքը կազմակերպուած ըլլայ: Մակայն մարդիկ ծայրայեղացան օրէնքի կատարումին մէջ, տառը եւ կմախքը պահեցին բայց բովանդակութիւնը մէկդի դրին: Իսկ Յիսուս եկաւ աշխարհ շեշտելու որ այդ օրէնքին ոգին ու բովանդակութիւնը աւելի կարեւոր էին: Ան մանաւանդ շեշտեց որ մենք ազատած էինք մեղքէն որովհետեւ դարձած էինք շնորհքի որդիներ: Երեկ, մեր եկեղեցին յիշատակեց Սուրբ Ներսէս Մեծի, Դ դարուն ապրած մեծագործ հայրապետին տօնը: Ան մեր եկեղեցւոյ մեծագոյն բարեփոխիչն է: Բայց ի՞նչ ըրաւ Ներսէս Մեծ: Ան գնաց իր ժողովուրդին կարիքներուն ետեւէն: Հիմնեց հիւանդանոցներ եւ անկեղանոցներ, Աստուծոյ խօսքը տարաւ իր*

կարիքները բաւարարելու աստուածահաճոյ առաքելութիւնը, Աւետարանը դարձնելով իր նշանաբանը: Եկեղեցին խօսեցաւ իր ժողովուրդին արդարութեան, սրբութեան եւ ճշմարտութեան մասին: Խօսեցաւ որ մեր ազգի կեանքին մէջ պատահած արհաւիրքը կը յաղթահարուի Տիրոջ յարութեամբ եւ յաղթանակով: Ուրեմն մահուան կը յաջորդէ յարութիւնը, Յեղասպանութեան նոյնիսկ կը յաջորդէ վերապրած Սփիւռքը:

Ուստի, օրէնքը հաստատուեցաւ Տիրոջ կողմէ, որ մենք հասկնանք եւ ճաշակենք Տիրոջ կողմէ հաստատուած սիրոյ շնորհքը:

Օրէնքը կը վերածուի շնորհքի եւ սէրը կը յայտնուի մեր կեանքին ու առօրեային մէջ: Սիրով՝ շնորհքը կը դառնայ Քրիստոս եւ Քրիստոսով Աստուծոյ ներկայութիւնն է որ մեր մէջէն կը ճառագայթէ մեր առօրեային մէջ: Մենք բոլորս կը ծառայենք այդ շնորհքին:

Ես որպէս համեստ յաջորդը երանելի երկու Առաջնորդներուն Գարեգին Արք Գազանճեանին եւ Աղան Արք Պալիօզեանին, եւ արժանաւոր Առաջնորդ Հայկազուն Արք Նաճարեանին, նոյն առաքելութիւնը պիտի ստանձնեմ հասնելով մեր հաստատութիւններուն, դպրոցներուն, հոգեւոր կեդրոններուն եւ եկեղեցական ամբողջական մարմնին, այնտեղ հաստատելով ազգային ոգին: Սուրբ Հոգիի շնորհքը պիտի հովի նման փչէ դէպի մեր հաւատացեալներու ակունքը, որպէսզի կենդանացնէ անզգամ հոգիները, մխիթարէ Հայ վիրաւոր սրտերը, որպէսզի զօրացնէ եւ վերանորոգէ այն հաւատքը, երբ ան կ'սկսածանքի տակ ըլլայ մեր կեանքի որեւէ հանգրուանին: Քրիստոս պիտի գործէ իր Սուրբ Հոգիին շնորհքով:

Այս պիտի ըլլայ իմ ծառայութեանս առանցքը:

Այստեղ կ'ուզեմ պատմել փոքր պատմութիւն մը: Հոգեւոր հովիւ մը կը նշանակուի համայնքի մը ծառայելու համար: Առաջին պատարագի իր քարոզին մէջ ան կ'ըսէ. «Ես եկած եմ այս, այս, այս առաքելութեան համար, սակայն ձեզի երկու լուր պիտի տամ, մին՝ լաւ, միւսը՝ վատ: Լաւ լուրն այն է որ ես եկած եմ ձեզի ծառայելու, Տիրոջ խօսքը ձեզի հասցնելու, ձեզ այս եկեղեցւոյ մէջ հաւաքելու եւ զայն պայծառացնելու համար: Իսկ վատը կը հարցնեն հաւատացեալները: Վատը, կը պատասխանէ Տէր հայրը, այս բոլորը պիտի ընեմ ձեզի հետ միասին, ձե՛ր փորձառութեամբ, ձե՛ր նուիրատուութիւններով, ձե՛ր ծառայութեան մասնակցութեամբ...»:

Դուք զիս կանչեցիք Առաջնորդի խոնարհ պաշտօնին: Թող Աստուած զիս առաջնորդէ:

Սուրբ Էջմիածինը, Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ զիս այստեղ առաքեց: Դուք պիտի օգնէք ինծի որ միշտ ոտքի մնամ: Երբ ծունկերս յոգնին, ձեր ուժով, հաւատքով եւ սիրով ոտքի պիտի ելլեմ եւ ձեզի հետ միասին քալեմ: Ես մինակս ոչինչ կրնամ ընել: Ես իմ ուժերս լաւ գիտեմ: Տկար եմ, բայց միեւնոյն ատեն ուժով, որովհետեւ ունիմ այսպիսի սիրով լեցուած համայնք, այսպիսի միաւորուած ընտանիք, հետեւաբար միասին կրնանք քալել բոլոր փորձութիւններուն եւ դժուարութիւններուն մէջէն, որոնք անպայման պիտի պատահին մեր կեանքին մէջ: Երբ կորուստ ունինք, նոր վաստակով պիտի բերենք աւելի առատ արդիւնք: Այս կ'ըլլայ աշխատանքով եւ ծառայութեամբ, Աստուծոյ խօսքին վկայութեան ծառայութեամբ: Այս պիտի ըլլայ ձեր եւ իմ իրական հոգեւոր հաղորդութիւնը:

Մենք մեր կեանքին մէջ երջանկութեան փնտրտուք ունինք, թէ՛ անձնական, թէ՛ ընտանեկան, թէ՛ աշխատանքային, թէ՛ համայնքային, թէ՛ եկեղեցական, թէ՛ ազգային կեանքի մէջ: Կ'ուզենք որ մեր կեանքը աւելի ո՛վ զօրանայ: Մեր Տէրը այս գաղտնիքին պատասխանը մեզի տուած է. մեր կեանքի բոլոր հանգրուաններուն մէջ դժուարութիւնները Աստուծոյ հետ խորհրդակցաբար լուծելն է պատասխանը:

Այս անդրանիկ քարոզին մէջ հոգիի պարտք ունիմ երախտագիտութիւն յայտնելու ՆՍՕՏՏ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին, որ հաստատեց եւ նշանակեց զիս թեմի Առաջնորդ եւ Հայրապետական Պատուիրակ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի: Յատուկ շնորհակալութիւն՝ Թեմական Խորհուրդին, գլխաւորութեամբ ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեանին եւ աջակից եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք տքնաջան աշխատեցան որպէսզի այս օրինեալ օրը միասին վայելենք: Ասոնք արժանաւոր թեմականներն են այս թեմին, որոնք այս համայնքին եւ թեմին համար պատրաստ են իրենց եսը, պատիւն ու անձը դնել յանուն Յիսուսի ճշմարիտ նպատակին:

Յատուկ շնորհակալութիւն Առաջնորդանիս Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ եւ հոգեւոր եղբօրս Արժանապատիւ Տէր Աւետիս քահանայ Համարձումեանին եւ իր աջակից հովիւներուն, որոնց



հետ տարիներ առաջ ծառայութեան փորձառութիւնը ունեցած եւ եւ հիմա ալ նոյնը պիտի շարունակենք ընել:

Շնորհակալութիւն Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծիսական Խորհուրդին այսօրուան եւ այլ կազմակերպչական աշխատանքներու կոկիկ ընթացքին համար, յատկապէս Պրն Արա Գոբուշեանին, որ ամէն ինչ բծախնդրութեամբ կատարեց որպէսզի Սրբազանը ուրախ մնայ առաջին օրերուն: Շնորհակալութիւն սարկաւազներուն եւ դպրաց դասին ու երգչախումբին, գլխաւորութեամբ Բարեշնորհ Վարդան Սարկաւազ Էջմասեանին:

Վերջապէս, շնորհակալութիւն հաւատացեալ բոլոր զաւակներուն, իմ քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք աղօթակից եւ վկայ եղան որ առաջնորդական ասան առի իմ ձեռքս ծառայելու համար ձեզի»:

Այս խօսքերով իր անդարանիկ քարոզը աւարտեց Սրբազան հայրը:

Յաւարտ Սուրբ եւ անմահ Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ երջանկայիշատակ Գարեգին եւ Աղան Արքեպիսկոպոսներու հոգիներուն խաղաղութեան համար, որմէ ետք տեղի ունեցաւ աջահամբոյր:

Սրբազան հայրը Սիոնի Որդիքով առաջնորդուեցաւ Առաջնորդարան եւ Պահպանիչով օրինեց հաւատացեալ ժողովրդը:

Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին կողմէ, որուն ընթացքին խօսք առին Թեմականի ատենապետը, փոխատենապետը եւ Սրբազան հօր բարեմաղթանք կատարելու համար այնտեղ հաւաքուած համայնքի կարգ մը կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, որոնք բարի երթ մաղթեցին Սրբազան հօր իր առաքելութեան մէջ:





## ՄԻՏՆԻ Սուրբ Յարութիւն Եկեղեցի

ԿԻՐԱԿՆՕՐՅԱԳԳՐՈՑԻ ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ՄԻՋՈՑԱԴՈՒՄԸ

Յատուկ անդրադարձ Միտնիի Սուրբ Յարութիւն Մայր եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի Վարք Սրբոց միջոցառումին, որը այս անգամ անդրադարձաւ Յովհաննէս Մկրտիչի կեանքին եւ գործունէութեան:

Իւրաքանչիւր սերունդ ունի իր սուրբերը: Բայց կան սուրբեր, որոնք դուրս են ժամանակի սահմաններէն: Անոնք կ'ապրին յաւերժ՝ մարդոց սրտերուն ու հոգիներուն մէջ:

Այդպիսին է Սուրբ Յովհաննէս Մկրտիչը՝ մեր սուրբերէն մէկը՝ խոնարհութեան, ճշմարտութեան ու քաջութեան խորհրդանիշը:

Սուրբ Յովհաննէսը եկաւ աշխարհ Տիրոջ ճանապարհը նախապատրաստելու առաքելութեամբ: Ան մկրտեց Յիսուսը, քարոզեց ապաշխարութիւն, ապրեցաւ խոնարհութեամբ ու զոհաբերութեամբ՝ դարձնելով իր կեանքը ճշմարտութեան ծառայութեան կենդանի օրինակ:

Այս սուրբի յիշատակին նուիրուած յուզիչ և հոգևոր մթնոլորտով համակուած միջոցառում տեղի ունեցաւ Յունիս 22-ին՝ Միտնիի Սուրբ Յարութիւն Մայր եկեղեցւոյ մէջ: Հայ Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի սաները ներկայացուցին բովանդակալից և գեղեցիկ ելոյթ՝ արտայայտելով իրենց սէրը և յարգանքը Սուրբ Յովհաննէս Մկրտիչի հանդէպ: Եկեղեցական և հանդիսաւոր մասին գեղարուեստական ղեկավարը Պողոս սարկաւազն էր: Անոր ջանքերով իւրաքանչիւր դրուագ մանրակրկիտ էր և մտածուած: Ան ոչ միայն գեղարուեստական ղեկավարն էր, այլև ոգեշնչող ուժը երեխաներուն և ուսուցիչներուն կողքին...

Միջոցառումը անմոռանալի դարձուցին նաև սաներուն ծնողները, մեծ մայրերն ու մեծ հայրերը, և դպրոցին նուիրուած ուսուցչուհիները, որոնք ոչ միայն աջակցեցան կազմակերպչական հարցերուն մէջ, այլև սրտանց ապրեցան իրենց երեխաներուն հոգևոր ներկայութիւնը բեմին վրայ:



Իրենց երեխաներուն հոգևոր ներկայութիւնը բեմին վրայ:



Ներկայ էր նաև Տէր Աշոտ քահանայ Արքահամեանը: Ան հանդէս եկաւ ոգեշնչող բանախօսութեամբ, մանրամասն ներկայացնելով Սուրբ Յովհաննէս Մկրտիչի կեանքը, անոր առաքելութեան խորհուրդը և այն, թէ ինչո՞ւ մինչ օրս ան կը համարուի ճշմարտութեան ու հաւատքի խորհրդանիշ:

Նշանակալից էր նաև մասնակցութիւնը Թեմական և Ծխական խորհուրդներու ատենապետներուն եւ վարչական անդամներուն: Ներկայ էին Սիտնիի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ հոգևոր հովիւ՝ Տէր Միւռն քահանայ Աւետիսեանը, ինչպէս նաև Ծխական խորհուրդի ատենապետուհի՝ տիկին Թալին Իսթէֆանեանը: Անոնց ներկայութիւնը վկայութիւն էր համայնքի համախմբուածութեան և հոգևոր կեանքի շարունակական զօրացման:

Եւ ի հարկէ, միջոցառման ջերմ ու յուզիչ եզրափակումը եղաւ Տէր Աւետիս քահանայի սրտէն բխող խօսքով: Ան շնորհակալութիւն



յայտնեց բոլոր ներկաներուն, յատկապէս փոքրիկներուն, որոնք իրենց մաքուր հոգիներով ու աղօթող սրտերով կենդանացուցին այս օրը: Ան երախտագիտութիւն յայտնեց այն բոլոր ծնողներուն, որոնք ջանք ու սէր չեն խնայեր իրենց զաւակները դէպի Աստուած առաջնորդելու: Ան շեշտեց՝ մենք իսկապէս կրնանք հպարտ զգալ, որ ունինք այսպիսի լուսաւոր փոքրիկներ, մեր եկեղեցւոյ ապագան ու մեր յոյսի շողը:

Այսպիսով, Սուրբ Յովհաննէս Մկրտչի յիշատակի օրը վերածուեցաւ հոգևոր վերանորոգման ու համայնքային համախմբման ջերմ օրի՝ ուր աղօթքը, սէրն ու հաւատքը միահիւսուեցան, օրը դարձնելով անմոռանալի:

Ձեռնարկի աւարտին, ներկաները առիթ ունեցան Էտկարեան սրահին մէջ վայելելու ՍՅԵ Տիկնանց մարմնի կողմէ պատրաստուած համադամ ուտեստները, քիչ մը աւելի լաւ վերյիշելու համար օրուան խորհուրդը:

Ձերմ շնորհակալութիւն շերման Մահմուրին՝ միջոցառման յիշարժան լուսանկարներ որսալուն համար:




*Երէցկին Յասմիկ Համբարձումեան*

## ՄԵԼՊՈՒՐՆ Սուրբ Աստուածածին Եկեղեցի

**Ուխտագնացութիւն Մայր Հայրենիք եւ Արևմտեան Հայաստան**

Մայիս 27-ին, Մելպուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ համայնքէն քսանմէկ ուխտաւորներ, Հոգևոր Հովիւ Տէր Խաչեր քահանայ Յարութիւնեանի առաջնորդութեամբ, մեկնեցան ուխտագնացութեան դէպի Հայաստան եւ Արևմտեան Հայաստան: Այս ուխտագնացութիւնը սոսկ ճամբորդութիւն չէր, այլ հոգիի վերանորոգութեան, աղօթքի եւ հայրենիքի շունչով զօրանալու ուխտագնացութիւն:





Ուխտագնացներու առաջին այցելութիւնները եղան Գառնիի հեթանոսական տաճար, ապա Գեղարդավանք՝ ժայռի մէջ քանդակուած հաւատքի անխոնջ խորհրդանիշ: Խումբը եղաւ Օիծեռնակաբերդի յուշահամալիր՝ խնկարկելով Հայոց ցեղասպանութեան նահատակներու յիշատակին:

Յաջորդ օրը, ուխտաւորները մեկնեցան Արարատեան դաշտի սիրտին մէջ գտնուող Խոր Վիրապ՝ այնտեղ, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ երկարամեայ բանտարկութենէն ետք դարձի բերաւ Տրդատ թագաւորը: Սուրբ Լուսաւորիչի հաւատքի վկայութեամբ տոգորուած խումբը շարունակեց իր ընթացքը դէպի Նորավանք՝ վարդագոյն ժայռերու գիրկին մէջ ծուարած վանքը, ուր քարերու լեզուն դեռ կը խօսի հաւատքի զօրութեան մասին:

Ուխտաւորները եղան նաև Արենիի հնավայրը՝ այցելեցին աշխարհահռչակ գինեգործական քարանձաւը: Օրը աւարտեցաւ Ջերմուկ քաղաքի մէջ, որը ծուարած է հրաշագեղ բնութեան գիրկը, ուր քաղցրահունչ ջրվեժներու շուրթերուն կը հանգչի անդորրը:

Յաջորդ օրը խումբը ուղևորուեցաւ Տաթևի վանական համալիր՝ վեհաշուք վանք, ուր տանող ճանապարհը կ'անցնէր «Տաթևի Թներ» անուամբ աշխարհահռչակ ճոպանուղիով: Այդտեղ, լեռներու ամպամած գագաթներուն ընդառաջ, ուխտաւորները վերապրեցան հոգիի լռութիւնն ու երկնքի հետ շաղկապուած աղօթքը:

Ուխտագնացութեան շարքը ամբողջացաւ Սևանայ լիճին վրայ նաւարկութեամբ՝ լարային քառեակի կատարմաբ կոմիտասեան հնչիւններու ուղեկցութեամբ:

Յաջորդող երկու օրերը ուխտաւորները հիւրընկալուեցան Կիւմրի քաղաքին մէջ, ծանօթանալով քաղաքի հարուստ մշակոյթին և հոգևոր ժառանգութեան:



**Յունիս 4**-ին սկսաւ Արևմտեան Հայաստանի անչափ սպասուած այցելութիւնը: Առաջին հանգրուանը եղաւ Կարս քաղաքը: Կարսի վեհաշուք բերդը և 10-րդ դարու Սուրբ Առաքելոց Եկեղեցին կը խօսէին հայ մարդու փառապանծ անցեալի մասին: Այնուհետև ուխտաւորները առիթ ունեցան տեսնելու Պայազիտի ամրոցը, Բերկրիի ջրվեժը և ձիւնապատ Արարատ լեռը՝ իր վեհաշուք տեսարանով:

Յաջորդ կանգառը Վան քաղաքն էր: Այստեղ խումբը սրտի մեծ ուրախութեամբ այցելեց Վանայ լիճ և անոր գմբեթաւոր պսակը՝ Աղթամար կղզին: Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ աղօթքը վեր բարձրացաւ լռութեան մէջ, եւ աղօթքի ձայնը, առանց խօսքի, տոգորեց հայրենիքի կարօտով լեցուն հոգիները: Անչափ յուզիչ էր վերադարձը՝ հեռուն թղնելով Սուրբ Խաչ Եկեղեցին...:



Գիշերը Կարս քաղաքին մեջ անցնելն յետոյ, յաջորդ օրը, ուխտաւորներու խումբը այցելեց փառապանծ Անիի աւերակները՝ երբեմնի «Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաք»ը, ուր քարերը կը շարունակեն պատմել հայոց ազգի փառապանծ անցեալին մասին:

**Յունիս 7-ին** խումբը վերադարձաւ Երևան:



քի մխիթարութիւնը եւ հոգևոր նորոգութեան ուրախութիւնը:

**Յունիս 8-ին**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը մեծ սիրով ընդունեց ու օրհնեց ուխտաւորները, մաղթելով, որ իրենց կատարած հոգևոր ձեռքբերումները անոնք ապրեցնեն և պտղաբեր դարձնեն զանոնք իրենց համայնքային կեանքէն ներս:

**Յունիս 9-ին** ուխտաւորները վերադարձան Մելպուրն, իրենց հետ բերելով Հայրենիքի շունչը, դարաւոր առաքելական հաւատ-

## Ուէնթուրթփիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

**Կիրակի 1 Յունիս** – Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան մատուցեց Սուրբ Պատարագ եւ քարոզեց երկրորդ Ծաղկազարդի մասին:

**Չորեքշաբթի 4 Յունիս**– Դաստիարակիչ Սուրբգրոց սերտողութիւն, որ ուղիղ եթերով սփռուեցաւ: Նման սերտողութիւններ կրկնուեցան 11, 18 եւ 25 Յունիսին:

**Շաբաթ 7 Յունիս** – Տէր Միւռն այցելեց Համագգային Սերոբ Փափագեան Վարժարան Հայոց Պատմութեան եւ Կրօնի դասեր աւանդելու համար:

**Կիրակի 8 Յունիս** – Տէր Միւռն պատարագեց Մելպուրնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ան քարոզեց Հոգեգալուստի մասին, կատարելով անոր պատմականը եւ բացատրելով Հոգեգալստեան խորհուրդը: Ան հաղորդութիւն տուաւ ներկայ հաւատացեալներուն:

**Երկուշաբթի 9 Յունիս** – Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ գմբէթին օծուած խաչերը զետեղուեցան գմբէթներուն վրայ:

**Ուրբաթ 13 Յունիս** – Տէր Միւռն, Երեցկին Սպիտակ եւ 9 Ծխական Խորհուրդի անդամներ ներկայ եղան Քրիստոնէական Միասնութեան աղօթքին եւ դրամահաւաքի ճաշկերոյթին կազմակերպուած ՆՍ Ուէլլզի Էքիւմէնիք Խորհուրդին կողմէ ձօնուած Նիկիական Հանգանակի 1700րդ տարեդարձին: Ձեռնարկը տեղի ունեցաւ Սուրբ Անթրնի եւ Սուրբ Փօլ Ղպտի Ուղղափառ եկեղեցւոյ մէջ, Կիլտֆորտ:





**Շաբաթ 14 Յունիս** – Տեր Միլոն եւ Երեցկին Սալիտակ ներկայ եղան դասախօսութեան մը կազմակերպուած ՀԲԸՄ Սիտնիի վարչութեան կողմէ ՀԲԸՄի Նիւթրըլ Պէյի կեդրոնին մէջ: Դասախօսեց Խօսնակ ամսագրի խմբագիր Պրն Համբիկ Մարտիրոսեան:

**Կիրակի 15 Յունիս** – Յընթացս Ս. Պատարագի, Տեր Միլոն քարոզեց Մեսիայի գալստեան մասին: Ան եզրակացուց ըսելով. «Յիսուս, այս նոր պատգամով, ջերմօրէն կը խօսի մեզի հետ, մեր սարսափելի գործերէն դարձի գալու և միայն Սուրբ Հոգիի պտղաստանը պարարտացնելու,

սիրելով, գործելով արդարութեամբ եւ ազնուութեամբ: Ըլլալով խաղաղարարներ, միշտ պատրաստ ըլլանք մեր ծառայութիւնը մատուցելու Աստուծոյ և Սուրբ Եկեղեցոյ, որու արգանդէն մենք հոգևորապէս ծնած ենք, Աստուծոյ հետ ներդաշնակ կապ ունենալու համար, եւ որն է մեր գոյութեան նպատակը»:

**Շաբաթ 21 Յունիս** – Համագգայինի Սիտնի Պարի Անսամբլի հրաւերին ընդառաջելով, Տեր Միլոն եւ Երեցկին ներկայ եղան Պարախումբի 25-ամեակին նուիրուած համերգին, Չացուուտի Քոնքորսին մէջ:



**Կիրակի 22 Յունիս** – Յընթացս Պատարագի, տեղի ունեցաւ Հայրապետական Օրհնութիւն Սուրբ Էջմիածնի Տօնին առիթով: Տեր Միլոն օրհնեց բոլոր Գրիգոր անուն կրող հաւատացեալները ի յիշատակ Ս. Գրիգոր Լուսաւորչին:

Կէսօրէ ետք, Տեր Միլոն ներկայ գտնուեցաւ Կալուածոց Յանձնախումբի տարեկան ընդհանուր ժողովին, որմէ անմիջապէս ետք, ընկերակցութեամբ երեցկնոջ եւ Ծխական Խորհուրդի 4 անդամներու, ան մասնակցեցաւ Ս. Յարութիւն Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցի կազմակերպած համերգին, նիւթ՝ «Վարք Սրբոց»:

**Ուրբաթ 27 Յունիս** – Տեր Միլոն, Ծխական Խորհուրդի ատենապետը, փոխատենապետը եւ անդամներ Սիտնիի օղակայանին մէջ դիմաւորեցին Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան հայրը, որմէ ետք Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ ժամերգութիւն:

**Շաբաթ 28 Յունիս** – Տեր Միլոն եւ Ծխական Խորհուրդի 8 անդամներ, Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ սրահին մէջ մասնակցեցան Թեմական Պատգամաւորական Ժողովին:

**Կիրակի 29 Յունիս** – Յաւարտ Սուրբ Պատարագի, Պաթմանեան սրահին մէջ տեղի ունեցաւ Ֆալաֆէլի ճաշկերոյթ պատրաստուած Տիկնանց օժանդակ մարմնի կողմէ:

*Մարի Քլէր Թորոսեան*





# ՕՔԼԱՆՏ, ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

## Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի

**Կիրակի 1 Յունիսի** երեկոյեան ժամը 7-ին, St Lukes Anglican Church-ի մէջ տեղի ունեցաւ Էքիւմէնիք աղօթք նուիրուած Նիկիական Հանգանակի 1700-ամեակին: Մասնակցեցան Անկլիքան, Կաթոլիկ, Հնդիկ Ուղղափառ Յակոբիկեան (Jacobite), Երիցական (Presbyterian), Մեթոսական (Methodist), եւ Հայ Առաքելական Եկեղեցիները: Նաեւ՝ Խաղաղականի Կղզիներէն կարգ մը եկեղեցիներ:

Կազմակերպիչ յանձնախումբը կը բաղկանար Անկլիքան, Կաթոլիկ, Յակոբիկեան Եկեղեցիներու ներկայացուցիչներէն, ինչպէս նաեւ Հայ Առաքելական Եկեղեցոյ ներկայացուցիչէն, յանձին Նշան Սարկաւագ Պատմաճեանի:



Բժախնդրօրէն պատրաստուած էր արարողակարգը գլխաւորութեամբ եկեղեցոյ Հոգեւոր հովիւ Տիկին Քլէր Պէրրի քահանային: Ի պատիւ Հայ Առաքելական Եկեղեցոյ, որ Նիկիական Հանգանակը ստորագրողներէն մին էր 325 թուականին, յանձնախումբի անդամները միաձայնութեամբ որոշեցին որ Աւետարանի ընթերցումը կատարէ Հայ ներկայացուցիչը եւ այդ՝ Հայերէն լեզուով:

Փոքր եկեղեցին լեցուած էր հարիւրի շուրջ հաւատացեալներով, տարբեր համայնքներէ, տարբեր երկիրներէ գաղթած հաւատացեալներով: Օրուան քարոզը եւ պատգամը տուաւ Օրլանտի Անկլիքան Թեմի Առաջնորդ Բոս Պէյ Եպիսկոպոսը, որմէ ետք Կաթոլիկ Թեմի Առաջնորդ Սթիւ Լօու Եպիսկոպոսը եւ բոլոր

հոգեւորականներն ու հաւատացեալները փոխադրուեցան քովի սրահը թեթեւ հիւրասիրութեան: Կը տիրէր հարազատ Էքիւմէնիք մթնոլորտ: Քրիստոնէական մեծ ընտանիքի մը հաւաքն էր, հիմնուած հաւատքի եւ սիրոյ վրայ:

Վերոնշեալ երկու Եպիսկոպոսները իրենց օրհնութիւնն ու ողջոյնները ուղարկեցին Առաջնորդ Սրբազան Գերշ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանին եւ պնդեցին անպայման զիրենք տեղեակ պահել երբ ան Նոր Զելանտա պիտի ժամանէր, որ իրենց յարգանքը մատուցէին անոր:

Նման արարողութեանց աւարտին, Աւետարան մը կայ որ կը փոխանցուի նախորդ կազմակերպիչ եկեղեցոյ հովիւէն՝ նոր տարուան կազմակերպող եկեղեցոյ հովիւին: Նախորդ տարի Մէլբայթ եւ Հայ Առաքելական Եկեղեցիները կազմակերպած էին հաւաքը Մէլբայթ եկեղեցոյ մէջ, որոնք Աւետարանը յանձնած էին Անկլիքան քահանային: Հետեւաբար, սովորութիւնը շարունակուեցաւ եւ Աւետարանը հանգամանօրէն յանձնուեցաւ Քոլին Մարշալ Երիցական Եկեղեցոյ Հիւսիսային շրջանի ընդհանուր վարիչին (Moderator): 2026-ի Էքիւմէնիք աղօթքի կազմակերպիչը Երիցական Եկեղեցին պիտի ըլլայ:

*Թղթակից*





## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ



Յունիս 2-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին, տեղի ունեցաւ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ժողով, որուն մասնակցեցան եպիսկոպոսներ և թեմակալ առաջնորդներ Հայաստանէն եւ սփիւռքէն:

Ժողովին քննարկուեցան հայրենիքին առջև ծառացած մարտահրաւերները, եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները և հասարակութիւնը յուզող շարք մը հիմնախնդիրներ:

Մասնաւոր անդրադարձ կատարուեցաւ վարչապետի կողմէն վերջին օրերուն հրահրուած հակաեկեղեցական ամօթալի արշաւին: Այս կապակցութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհուրդը հանդէս եկաւ հետեւեալ յայտարարութեամբ:



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Հայաստանի վարչապետը պետական այրին անյարիր բառապաշարով, վիրաւորանքներով և մեղադրանքներով հերթական արշաւն է սկսել ընդդէմ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ օրէնքից վեր դասելով իր անձը:*

*Հայիոյախառն, անվայել խոսոյթներով յախուռն հրապարակումները զուրկ են բարեկրթութեան տարրական նորմերից, ոտնահարում են մարդու հիմնարար իրաւունքները, կոպտօրէն վիրաւորում հաւատացեալների կրօնական զգացմունքները և սքողում կեղծ սրտացաւութեան հիմնաւորումներով:*

*Եկեղեցամարտ այս կեցուածքը ակնյայտօրէն թելադրուած է քաղաքական նպատակներով և փորձ է նրսեմացնելու ազգային կեանքում և միջազգային շրջանակներում յարգանք վայելող Հայոց Եկեղեցու և եկեղեցականաց հեղինակութիւնը, լռեցնելու Եկեղեցու ձայնը և նուազեցնելու նրա հանրային ազդեցութիւնը: Կառավարութեան ղեկավարի հակաեկեղեցական պահուածքը, ազգային արժէքների և Եկեղեցու դէմ նախաձեռնած գործընթացները յղի են կործանարար հետևանքներով և սպառնալիք՝ հայոց պետականութեանը, մեր ժողովրդի միաբանութեանը թէ՛ հայրենիքում և թէ՛ սփիւռքում: Այսպիսի գործողութիւնները պառակտում են հասարակութիւնը, տկարացնում են ազգի ոգին և հայրենանուիրումի բարձր*



գիտակցութիւնը յատկապէս առկայ մարտահրաւերների պայմաններում: Նման դատապարտելի ձեռնարկումները սպասարկում են արտաքին հայատեաց ուժերի նկրտումներին՝ որոշակիօրէն կապակցուելով ադրբեջանական քարոզամեքենայի կողմից հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն ուղղուած զրբ-պարտութիւնների և կեղծ մեղադրանքների հետ:

Հայոց Եկեղեցին, գիտակից իր յանձնառութիւններին, անշեղօրէն շարունակելու է հոգեփրկչական և ազգապահպան առաքելութիւնը՝ ընդդիմանալով ազգավնաս ու կործանարար ընթացքներին և մշտապէս հետամուտ լինելով պետութեան ու ազգի գերակայ շահերի, մեր սրբազան արժէքների պաշտպանութեանը:

Եկեղեցու հարցերը լուծում են եկեղեցական կարգերի ու կանոնների համաձայն և դուրս են պետական և քաղաքական գործիչների իրաւասութիւնից: Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մէկ ամբողջութիւն է իր հաւատացեալ զաւակներով և զինուորագրեալ հոգևորականներով՝ ի գլուխ ունենալով ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետին: Կոչ ենք ուղղում իրաւասու պետական մարմիններին՝ կասեցնել վարչապետի այս անօրինական և անհեռատես քաղաքականութիւնը: Հարկ չկայ Եկեղեցին ներքաշելու արհեստական օրակարգերի մէջ և մղելու հակադարձման գործողութիւնների:

Այս նոր փորձութեան յանդիման, յորդորում ենք մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակներին լինել միաբան ու միասնական, առ հայրենին և Սուրբ Եկեղեցին հաւատարմութեամբ ու զօրեղ հաւատքով յաղթահարել մեր ժողովրդի առջև ծառացած բոլոր մարտահրաւերները և երբեք թոյլ չտալ մեր ազգային հիմնասիւնների սասանումը: Թող այս մերժելի մեքենայութիւնները պատճառ չդառնան հիասթափութեան և գայթակղութեան:

Աղօթում ենք առ Փրկիչ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ վնասաբեր երևոյթներով չխաթարուի հայրենական կեանքը, և աշխարհասփիւռ մեր ժողովուրդը ապրի խաղաղութեան, բարօրութեան և առաջընթացի մէջ: Թող Տէրը անսասան պահի հայոց պետականութիւնը և պայծառ՝ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հաւատաւոր իր բոլոր զաւակներով:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԼԻԲԱՆԱՆԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՔՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**



Յունիս 3-ին, Վեհափառը ընդունեց ուխտաւորաբար Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Մելքիթ Յունա-Կաթօլիկ Եկեղեցւոյ Լիբանանի և Զահլէ և Ֆուրգոլի թեմի առաջնորդ Իպրահիմ եպիսկոպոս Իպրահիմը, Անտիոքի և Համայն Արեւելքի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Լիբանանի, Զահլէի և Պաալպէքի թեմի առաջնորդ Միթտրոպոլիտ Անթուան Էլ Սուրին, ուղեկցութեամբ «Կարտինիա Լեպանիզ Ֆարմս» ընկերութեան հիմնադիր տնօրէն Նիքոլաս Ապու Ֆայսալի:

Ամենայն Հայոց Կաթօղիկոսը իր օրհնութիւնը փոխանցեց հիւրերուն՝ գոհունակութեամբ անդրադառնալով Քոյր Եկեղեցիներու հետ առկայ փոխ-յարաբերութիւններուն:

Իրենց հերթին Իպրահիմ եպիսկոպոս և Միթտրոպոլիտ Անթուան Էլ Սուրի շնորհակալութիւն յայտնեցին Ամենայն Հայոց Հայրապետին ընդունելութեան համար, իրենց զօրակցութիւնն ու աղօթակցութիւնը բերելով Հայ Եկեղեցւոյ և Հայ ժողովուրդին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԻՍՏՐԱԼԻԱՅԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՈՒՖՏԱԻՈՐՆԵՐԸ

Յունիս 8-ին Վեհափառ ընդունեց Աստրալիոյ և Նոր Զելանդիայի հայոց թեմէն ժամանած ուխտաւորները, ուղեկցութեամբ Մելպուրնի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժանապատիւ Տէր Խաչեր քահանայ Յարութիւնեանի:

Տէր Խաչեր Նորին Սրբութիւնը տեղեկացուց, որ մինչև Հայաստան ժամանելը աստրալահայերը որպէս ուխտաւոր այցելած են Արևմտեան Հայաստան և այժմ, գտնուելով հայրենիքի մէջ, կ'այցելեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնութիւնը:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնութիւնը փոխանցելով հայորդիներուն, գոհունակութեամբ անդրադարձաւ Աստրալիոյ հայ համայնքի հայրենասնուէր ու եկեղեցասէր կանքին: Նորին Սրբութիւնը նկատեց, որ աշխարհասփիւռ հայոց թեմերէն նման ուխտագնացութիւններու կազմակերպումը հայրենիքի համար դժուարին այս օրերուն կը գտեալնդէ հայրենաբնակ իրենց եղբայրներն ու քոյրերը:

Այս առնչութեամբ Հայոց Հայրապետը յորդորեց ներկաները, որ իրենց այցի շրջանակներուն մէջ նաև հանդիպումներ ունենան հայրենազրկուած արցախցիներու հետ՝ մօտէն ծանօթանալու անոնց առջև ծառացած մարտահրաւերներուն և իրենց աջակցութիւնն ու զօրակցութիւնը բերելու անոնց:

Աւարտին, Վեհափառ մաղթեց, որ Աստուած մշտապէս պահէ ու պահպանէ զիրենք Իր սիրոյն և խնամքին ներքոյ:



Հայր Անանիա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացուց նորածնները, հայցելով Նորին Սրբութեան օրհնութիւնն ու պատգամը ձեռնադրեալներուն:

Հայոց Հովուապետը գոհունակութիւն յայտնեց օծեալ հոգևորականներուն իրենց ծառայութիւնը շարունակելուն առիթով:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՔԱՌԱՄՆՕՐԵԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ ԱՆՅԱԾ ՆՈՐԱԾՔԱՀԱՆԱՆԵՐԸ

Յունիս 16-ին Վեհափառ ընդունեց Մայիս 4-ին քահանայական ձեռնադրութեան ու օծման արժանացած և Մայր Աթոռի մէջ քառասնօրեայ պատրաստութեան շրջանը անցած նորածն եկեղեցականները, առաջնորդութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրեանի:



Իր խօսքին մեջ Վեհափառ Հայրապետը յորդորեց նորածնները, որ սերն ու հաւատը դարձնեն իրենց հոգևոր սպասաւորութեան առանցքը, յանձնառութեամբ և եկեղեցականի բարի օրինակով իրականացնեն հոգեփրկչական առաքելութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Ան ընդգծեց նաև, որ նորածն հայրերը իրենց ծառայութեան մէջ կը հանդիպին բազմաթիւ դժուարութիւններու և մարտահրաւերներու, որոնց առջև հարկ է չընկրկիլ, չվիատիլ, այլ առ Աստուած զօրաւոր հաւատքով, նուիրումով, համբերատարութեամբ յաղթահարել զանոնք, արդիւնաւետ դարձնելով հոգևոր սպասաւորութիւնը Մայր Եկեղեցւոյ անդաստանին մէջ և Սուրբ Հոգիի առաջնորդութեամբ իրականացնել իրենց հովուական առաքելութիւնը՝ ի նպաստ հայորդիներու հոգևոր կեանքի պայծառութեան և Եկեղեցւոյ շէնացման:

Հանդիպման աւարտին Նորին Սրբութիւնը օրհնեց հոգևորականները և անոնց ընծայեց ձեռաց խաչեր ու Սուրբ Հաղորդութեան մասնատուփեր:

### ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐՐԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ, «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԷՈՆ և ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒԱՆ ՊԱՆԹԷՈՆ

Յունիս 16-ին Միաբանական համագումարի առիթով, Մայր Աթոռ մէկտեղուած Հայաստանի և Սփիւքի թեմերուն մէջ ու եկեղեցական կառոյցներուն մէջ սպասաւորող Սուրբ Էջմիածնի միաբանները, մինչ համագումարի պաշտօնական մեկնարկը, այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ իրենց խոնարհումը բերելով Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներուն: Ծաղկեպսակի գետեղումէն ետք, հոգևոր հայրերը կատարեցին նաև Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներու բարեխօսական կարգ:



Այնուհետև անոնք մեկնեցան «Եռաբլուր» զինուորական պանթէոն՝ իրենց յարգանքի տուրքը մատուցելու յանուն հայրենիքի իրենց կեանքը ընծայաբերած քաջորդիներու յիշատակին և աղօթելու անոնց հոգիներուն հանգստութեան ու խաղաղութեան համար:

Միաբանական համագումարին մասնակիցները այցելեցին նաև Կոմիտասի անուան պանթէոն, իրենց յարգանքի տուրքը մատուցելու Կոմիտաս վարդապետի յիշատակին: Միաբանները Հայ Եկեղեցւոյ մեծանուն վարդապետին շիրիմին կատարեցին հոգեհանգստեան կարգ:



### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 17 ՅՈՒՆԻՍ

*Քիչ առաջ յայտնի դարձաւ, որ Հայոց Եկեղեցուն աջակցութիւն յայտնելուց անմիջապէս յետոյ, իրաւապահ մարմինների կողմից փորձ է կատարուել ձերբակալելու ազգային բարերար Սամվել Կարապետեանին, և այս պահին խուզարկում է նրա տունը:*

*Խստօրէն դատաւարտում ենք ակնյայտ քաղաքական շարժառիթներով պայմանաւորուած հետապնդումը: Յորդորում ենք*

*ՀՀ իշխանութիւններին անյապաղ դադարեցնել ապօրինի գործողութիւնները:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱԻՈՐՆԵՐԸ



Յունիս 20-ին Վեհափառը ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի Բոկա Ռատոնի (Ֆլորիդա) Սուրբ Դավիթ Եկեղեցույ համայնքի ուխտավորները, առաջնորդութեամբ հոգևոր հովիւ Արժանապատիւ Տ. Սևակ քահանայ Գաբրիէլեանի: Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը, Տէր Սևակ ընդգծեց, որ ուխտավորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած են իրենց ուխտը վերանորոգելու և Հայրենիքի հետ կապը զորացնելու համար: Վեհափառը իր ուրախութիւնը յայտնեց Մայր Աթոռ այցին

առիթով՝ գոհունակութեամբ հաստատելով, որ Սփիւռքի հայկական համայնքներու կողմէ յաճախ կազմակերպուող ուխտագնացութիւնները լաւագոյն առիթ են հոգևոր նորոգութեան, հայրենաճանաչութեան և հայրենասիրական զգացումներու զօրացման:

Հայոց Հովուապետը պատգամեց հաւատքով զօրացած վերադառնալ իրենց համայնքները և նախանձախնդրօրէն մասնակից ըլլալ Եկեղեցույ հոգևոր ու ազգապահպան առաքելութեան իրականացման:

## ՆՇՈՒԵՑԱԻ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՏՕՆԸ



Յունիս 22-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նըշեց Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնը: Այս տօնը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի հիմնադրման տօն է:

Այս առիթով, հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին, Միածնաեջ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններէն Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաճարեանը:

Սրբազան արարողութեան ներկայ էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի տարբեր կառոյցներու մէջ պաշտօնավարող եպիսկոպոսներ, միաբանական համագումարի մասնակիցները, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութիւններու միաբաններ, Գերագոյն հոգևոր խորհուրդի անդամներ, բարերարներ, Հայաստանի և սփիւռքի տարբեր համայնքներէ ժամանած բազմաթիւ ուխտավորներ:



Տօնի առիթով դուրս էին բերուած նաև Սուրբ Էջմիածնի մէջ պահուող Տիրոջ Կենաց Փայտի մասունքը, Աստուածամուխ Սուրբ Գեղարդը, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջը, Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի մասունքը, Սուրբ Գրիգոր Նարեկացիի մասունքը, Սկևռայի մասանց պահարանը և Հայոց Յեղասպանութեան սուրբ նահատակներու մասունքարանը:

Պատարագի աւարտին Մայր Տաճարի զանգակատան առջև կատարուեցաւ Սուրբ Էջմիածնի մաղթանք: Ապա, Վեհափառ իր հայրական օրհնութիւնն ու պատգամը յղեց հաւատաւոր ժողովուրդին: Տես՝ ստորեւ:

**Ն.Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ  
ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ  
22 ՅՈՒՆԻՍ 2025**

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Ոչ որ չի կարող դնել ուրիշ հիմք,  
քան դրուած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոսն է»  
(Ա Կորնթ. 3.11):*

*Միեւնի հաւատաւոր ժողովուրդ,*

*Հայրապետիս համար հոգևոր անհուն ուրախութիւն է Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնի հոգևորոց այս օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբուած տեսնել ազգիս հազարաւոր զաւակների՝ հայրենի մեր երկրի տարբեր շրջաններից և սփիւռքի համայնքներից: Հայրական սիրով ողջունում ենք ձեզ և բերում Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները ամենքիդ:*

*Հաւաքուել ենք Քրիստոսի էջքով նուիրագործուած այս սրբավայրում՝*

*վերանորոգելու սիրոյ ու նուիրումի մեր ուխտը առ Աստուած ու հայրենին և առ Սուրբ Էջմիածինը, որը Տիրոջ նախախնամութեամբ դարձաւ մեր ազգի հոգևոր զարթօնքի գօրութիւնը, մեր ինքնութեան դարբնոցը և նոր շունչ ու աւին հաղորդեց մեր ժողովրդին, մեր բազմադարեայ պատմութեան ընթացքին: Աստուած մեզ ընդունեց իբրև ազգ սուրբ և ժողովուրդ սեփական (Ա Պետր. 2.9) և Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Հայրապետի տեսիլքով ազգիս պարզեց Սուրբ Էջմիածինը որպէս փրկութեան տապան և մեր հաւատքի անասան վէմ ու հիմնասիւն: «Ոչ որ չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրուած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթ. 3.11),- ասում է Պօղոս առաքեալը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Աստոյ հետ մեր ժողովրդի յաւերժական ուխտի խորհրդանշն է, որ դրոշմուած է ամեն հայի հոգում: Սուրբ Էջմիածինը մեր հոգևոր էութիւնն ու ազգային դիմագիծն է, մեր սիրտն ու ոգին է, մեր անցեալն ու ներկան և մեր ապագան: Սուրբ Էջմիածնով է միշտ միասնական մնացել մեր ժողովուրդը: Չկայ Սուրբ Էջմիածին առանց հայութեան, և չկայ հայութիւն առանց Սուրբ Էջմիածնի: «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան», - ճշմարտապէս արձանագրում է Առաքել Դավրիժեցի պատմիչը:*

*Սուրբ Էջմիածինը անշեջ ու լուսաւոր փարոս է մեր ժողովրդի փրկութեան ճանապարհին: Կաթողիկոսանիստ Սուրբ Էջմիածնից դարեր շարունակ Հայրապետական առաջնորդութիւն և օրհնութիւն է բաշխում համայն հայութեանը: Քրիստոսաէջ այս վայրում դարեր առաջ Հայրապետական Աթոռի վերահաստատումով ազգս հայոց համախմբուեց Հայաստանում և վերականգնեց իր անկախ*



պետականությունը: Եղել են ժամանակներ, երբ տարբեր ուժեր ձգտել են սահմանափակել մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը և ենթարկեցնել իրենց շահերին: Այդ ճանապարհը, ցաւալիօրէն, կործանարար



բաժանումներ է բերել ներագային կեանքում: Բայց հաւատատուր մեր ժողովուրդը, ունկնդիր Տիրոջ խօսքին, թէ՛ «ինքն իր մէջ բաժանուած ամեն թագաւորութիւն աւերում է» (Մատթ. 12.25), միշտ նախանձախնդիր է եղել պահպանելու իր միասնականությունը և ի սեր հայրենեաց համախմբուածութիւնը: Այսօր էլ նման տագնապալի օրեր ենք ապրում: Մեր երկրի բազմաթիւ հիմնախնդիրների առջև միաւորման ջանքերի փոխարէն շարունակում են հասարակութեանը պատակտելու ցաւալի գործողութիւնները: Իշխանութիւնների կողմից սանձա-

գերծուած հակակեղեցական արշաւը լրջագոյն սպառնալիք է ազգային մեր միաբանութեանը, մեր երկրի ներքին կայունութեանը և ուղիղ հարուած՝ հայոց պետականութեանը: Օրեր առաջ ականատես դարձանք մի նոր դատապարտելի երևոյթի. ի պաշտպանութիւն Սուրբ Էջմիածնի հանդէս եկող եկեղեցանուէր հայորդո՛ւ՝ ազգային բարերար Սամվէլ Կարապետեանի դէմ իրականացուեց անօրինական հետապնդում: Արդարև, ատելութեամբ ու թշնամանքով բարիք չի ծնուի, բռնաճընշումներով երկիր չի կառուցուի, սպառնալիքի ու վախի մթնոլորտում արդարութիւն ու համերաշխութիւն չի հաստատուի: Սուրբ Էջմիածինը, հաւատարիմ հոգեփրկչական և ազգի ու պետականութեան զօրացման իր պատմական առաքելութեանը, հետևողականօրէն շարունակելու է պաշտպանել ազգային շահերն ու իրաւունքները, անխաթար պահել մեր ժողովրդի միաբանութիւնը և համախմբել համայն հայութեանը՝ արիութեամբ դիմագրաւելու ազգային ու հայրենական կեանքի առջև ծառացած դժուարութիւններն ու մարտահրաւերները:

Միրելիներ, որդիական հաւատարմութեան զգացումներով այսօր դուք՝ որպէս ուխտաւոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էք՝ օրհնութիւն ստանալու տօնի առիթով դուրս բերուած Տէրունական Սուրբ Խաչի Մասունքից, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջից, Սուրբ Գեղարդից և երկրպագութեան համար ձեզ մատուցուած սրբութիւններից: Այս սրբութիւնների հրաշագործ զօրութեամբ մեր բարդ ու վտանգաշատ ժամանակներում փորձութիւնների մէջ մխիթարութիւն պիտի գտնենք, ուժ առնենք նեղութիւնները դիմագրաւելու, բարօր կեանք ու լուսաւոր ապագայ կերտելու:





Սուրբ Էջմիածնի տօնի այս նուիրական օրը առաքելալի խօսքով պատգամում ենք ձեզ. «Հաստատուն մնացեք հաւատի մէջ, քաջ եղէք, զօրացեք: Ձեր ամեն ինչը սիրով թող լինի» (Ա Կորնթ. 16.13-14): Հաստատարիմ մնացեք Քրիստոսասիրիմ Սուրբ Էջմիածնին, ձեր ինքնութեանը: Հաստատականութեամբ պաշտպանէք մեր պատմութիւնն ու սրբազան մեր արժէքները, մեր հաւատքը, սրբութիւնները և նախանձախնդիր եղէք ազգաշէն ու հայրենօգուտ բարի գործերի մէջ: Ապրէք համերաշխութեամբ, միմեանց հանդէպ հոգատարութեամբ և միշտ ընթացեք աստուածահաճոյ ուղիներով: Հաստատում ենք, որ մեր ժողովրդի սերն առ Աստուած և նուիրումն առ հայրենին ամուր հիմք ու երաշխիք են մեր համընդհանուր իղձերի ու տեսիլքների իրականացման, մեր խաղաղ ու անվտանգ կեանքի:

Այս հոգեւորոգ օրը Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում ձեզ և Մեր բոլոր զաւակներին, ովքեր մշտապէս, ինչպէս և Եկեղեցու դէմ իրականացուող դատապարտելի արշաւի այս օրերին իրենց անսակարկ սերն ու աջակցութիւնն են ցուցաբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Միասնական աղօթքով հայցենք հաւատքի մեր Հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և Սուրբ Տրդատ թագաւորի բարեխօսութիւնը, որ Տիրոջ խաղաղութիւնը հաստատուի աշխարհում, ապահով ու անխռով լինեն մեր հայրենիքն ու աշխարհասփիւռ ժողովուրդը՝ միշտ առաջնորդուելով Սուրբ Էջմիածնից ճառագող աստուածապարզն հաւատով ու յոյսով: Աղօթենք արցախցի մեր քոյրերի ու եղբայրների համար՝ զօրակից լինելով նրանց նեղութիւնների ու դժուարութիւնների յաղթահարման գործում: Աղօթենք Աղբբեջանի կողմից գերեվարուած մեր զաւակների ազատ արձակման, ինչպէս նաև մեր երկրում յանիրաւի կալանաւորուած մեծանուն բարերար տիար Սամվել Կարապետեանի ազատութեան համար: Խնդրենք Ամենակալից, որ Իր Սուրբ Աջի պահպանութիւնն ու հովանին և Քրիստոսադրոշմ Սուրբ Էջմիածնի առատ օրհնութիւնները միշտ տարածեալ լինեն մեր ազգի և հայոց աշխարհի վրայ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհները, սէրը և խաղաղութիւնը թող լինեն մեզ և ամենքի հետ: Ամէն:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՏԱՐԲԵՐ ԾՐԱԳՐԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՓԻՒՌՔԱՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Յունիս 25-ին Վեհափառ ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Երևանի «Գլոբալ առաջնորդութեան» և «Բացայայտիր Հայաստանը» ծրագրերուն մասնակից սփիւռքահայ երիտասարդները, ուղեկցութեամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կեդրոնական վարչութեան անդամ տիար Վազգէն Եագուպեանի: 64 սփիւռքահայ երիտասարդներ Հայաստան ժամանած են ՀԲԸՄ ծրագրերու միջոցաւ հաղորդակից ըլլալու հայրենիքի պատմամշակութային ու հոգևոր ժառանգութեան և զօրացնելու իրենց կապը հայրենիքի հետ:



Վեհափառ իր օրհնութիւնը բերելով հայորդիներուն, բարձրօրէն գնահատեց ՀԲԸՄի կողմէն իրականացուող հայրենաճանաչութեան, կրթադաստիարակչական, մշակութային նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիւ տարբեր երկիրներու մէջ հասակ առած երիտասարդները հնարաւորութիւն կը ստանան համախմբուելու հայրենիքի մէջ, հարստացնելու իրենց գիտելիքները և հաղորդ դառնալու հայրենի իրականութեան:

Նորին Սրբութիւնը պատգամեց ներկաներուն ըլլալ ազգային ինքնութեան կրողը, ամուր պահել սէրը հայրենիքի նկատմամբ և օգտակարութիւն բերել իրենց համայնքներուն առաւել զօրացման ու հայրենիքի բարօրութեան:

**ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՈՐ  
ԽՈՐՀՈՒՐԴ  
ՀԱՆԴԷՍ ԵԿԱԻ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ**



Յունիս 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, Վեհափառի նախագահութեամբ տեղի ունեցաւ Գերագոյն հոգևոր խորհուրդի ժողով, որ հանդէս եկաւ հետեւեալ յայտարարութեամբ.

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խոր մտահոգութիւն է արտայայտում Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալըստանեանի և իր համախոհների նրկատմամբ այսօր իրաւապահ մարմինների ձեռնարկած գործողութիւնների և նրանց մեղսագրուող ծանր մեղադրանքների կապակցութեամբ:

Իրաւական գործընթացի նկատմամբ վստահութիւն չի ներշնչում այն հանգամանքը, որ սկզբից և եթ շէ վարչապետը և իշխող կուսակցութեան տարբեր ներկայացուցիչներ ակնյայտ քաղաքական նրկատառումներով, տարաբնոյթ հրապարակումների միջոցով

փորձում են ուղղորդել իրաւապահ մարմիններին:

Դատաւարտելի է նաև յիշեալ գործընթացը Եկեղեցու հետ արհեստականօրէն կապակցելու և Մայր Աթոռի անունը շահարկելու դիտաւորութիւնը, ինչն ամբողջապէս տեղաւորում է իշխանութիւնների նախաձեռնած հակաեկեղեցական արշաւի համատեքստում:

Մայր Աթոռը օրինական բոլոր միջոցներով հետամուտ է լինելու գործի արդարացի ընթացքին և յորդորում է պատկան մարմիններին չտրուել քաղաքական շահարկումներին, առաջնորդուել շէ Սահմանադրութեան և օրէնքների պահանջներով՝ յարգելով անմեղութեան կանխավարկածի սկզբունքը:

**ՄԻԱԾՆԱԷԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷԶ ՄԱՏՈՒՅՈՒԵՅԱԻ  
ՍՈՒՐԲ և ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ**

Յունիս 30-ին, Երեկոյեան Ժամերգութենէն ետք, Վեհափառին հանդիսապետութեամբ, Միածնաէջ Մայր տաճարին մէջ մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ՝ գերեալներու ազատութեան, նեղեալներու մխիթարութեան և հայրենի երկրի խաղաղութեան համար:

Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:



Սրբազան արարողության ներկայ էին Մայր Աթոռի միաբաններ, Արցախի պետական և հասարակական գործիչներ, Ադրբեջանի մեջ ապօրինի պահուող հայ պատանդներու եւ գերիներու ընտանիքներու անդամներ:



Սրբազան Հայրը իր քարոզին մեջ ըսաւ. «Քրիստոնէութեան հազարամեայ պատմական փորձառութիւնը յստակորէն ցոյց է տալիս, որ բանտը, գերութիւնը և նեղութիւնը անբաժան ուղեկիցներն են արդարութեան ճանապարհի՝ լինի դա որպէս յանցանքի արդար հատուցում, թէ որպէս արդարութիւնը լռեցնելու գործիք: Բանտարկուել են առաքելները, նրանց աշակերտները, հազարաւոր քրիստոնեաներ, և վերջ ի վերջոյ նաև մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Քրիստոնեան երբեք չպէտք է մոռանայ, որ բանտարկումը և

գերութիւնը յաճախ այս աշխարհի անարդարութեան և ոչ թէ արդարադատութեան արդիւնք է, և որ ազատութեան մեջ գտնուողները յաճախ պակաս հոգնոր ու բարոյական պատասխանատւութիւն չեն կրում, քան բանտերում գտնուող իրենց եղբայրները»:

«Թշնամին Արցախի Քաղաքական բանտարկեալները դատում է, որովհետև նրանք իրենց անձով վկայում են Արցախի անկախութեան իրաւունքի մասին: Մենք պէտք է գիտակցենք, որ անկախ ամեն ինչից, ցանկացած հայ, ով ապրել և գործել է յանուն Արցախի, այսօր կարող էր հանգամանքների բերումով լինել ապօրինի բռնադատեալների փոխարէն», ըսաւ Սրբազանը և յաւելեց, որ Հայոց Եկեղեցին բազմիցս տարբեր միջազգային և միջ-եկեղեցական հարթակներում իր արդարացի բողոքի ձայնն է բարձրացրել պատանդառուած հայորդիների ապօրինի գերութեան առնչութեամբ:

Այս օրերին, երբ բարեպատեհ առիթը ունենք շաբաթապահքի ամեն օրը ամբողջացնելու Մայր Տաճարում մատուցուած Սուրբ Պատարագի խորհրդով, չենք կարող մեր սրտաբուխ աղօթքներում չիշել նաև անազատութեան մեջ գտնուող մեր երկու հոգնոր եղբայրներին ու Եկեղեցու նուիրեալ սպասուորներին՝ Միքայէլ և Բագրատ արքեպիսկոպոսներին, ինչպէս նաև ազգային մեծ բարերար ու Հայոց Եկեղեցու նուիրեալ զաւակ՝ Տիար Սամվէլ Կարապետեանին՝ մաղթելով, որ ի վերջոյ յաղթանակի արդարութիւնն ու ճշմարտութիւնը և նրանք կարողանան Տիրոջմով զօրացեալ յաղթահարել այս փորձութիւնները», - ըսաւ պատարագիչ Սրբազանը:

Պատարագիչ Սրբազանը ընդգծեց, որ մենք ոչինչ կրնանք պահանջել օտարներէն, եթէ այսօր չենք միանար հայորդիներու արդար իրաւունքներու պաշտպանութեան գործին համար: Ապա, Սրբազանը պատուիրեց մէկդի դնել ներքին տարաձայնութիւնները և հետամուտ ըլլալ ազգային միասնութեան հաստատման:

## Diocesan News

**Wednesday 3 June** – At the invitation of the New South Wales Ecumenical Council (NSWEC), the periodic meeting of the heads of member churches was held. This meeting is held twice a year to inform the heads of churches about the activities of the Council. His Grace Bishop Vardan Navasardyan was represented by the Diocesan Chancellor Deacon Nishan Basmajian who provided information about the activities of the Armenian Diocese of Australia and New Zealand, conveying the blessings of His Grace to those present.



The meeting heard information from all the member churches. The newly appointed General Secretary Reverend Rod Benson was invited by the newly elected President Reverend Carmel Ieraci, to present the work of the Council over the past six months, which was greatly appreciated by all the participants.

It is customary to invite a speaker to these meetings to present an urgent issue of interest in the world and that which is of concern to the Council. This time, the invited guest was Mr Michael Kolokossian, Executive Director of the Armenian National Committee of Australia (ANC), who participated in the meeting accompanied by ANC Committee member Mr Sebastian Najarian. Mr Kolokossian gave a detailed explanation of the genocidal acts that took place in Artsakh giving a historical account of the inhumane acts committed by Azerbaijan, focusing on the desecration to the ground and conversion of religious



and cultural monuments, churches and monasteries to mosques by Azerbaijan, or attributing them to buildings belonging to Caucasian Albania. He showed satellite images taken before and after the annexation of Artsakh.

The two young men greatly impressed those present with their knowledge, analysis, and spirit of struggle for justice. They answered many questions accurately and gave convincing reasons. The meeting unanimously agreed, in cooperation with the Diocese, to support the work of the ANC in favour of Artsakh and Armenia, especially demanding that the Australian government support and exert pressure on Azerbaijan to ensure that the cultural and religious heritage monuments of Artsakh remain intact and to ensure the safe return and settlement of the forcibly displaced Artsakh Armenians.



Cooperation between the Diocese, Community and Ecumenical Institutions has been a priority of the Diocesan Council. Today's meeting of heads of churches was a practical expression of this.

**Friday 13 June** – The annual Prayer for Christian Unity, initiated by the World Council of Churches in the Southern Hemisphere, takes place during Pentecost. The event is organised on a state-wide basis by the NSWEC. This year's prayer was dedicated to the 1700<sup>th</sup> anniversary of the Nicene Creed and was organised by the Coptic Orthodox and Armenian Apostolic Churches at St Anthony and St Paul Coptic Orthodox Church in the suburb of Guildford. A beautiful service was organised by Reverend Father Avetis Hambardzumyan,





Deacons Boghos Keleshian and Nishan Basmajian and Coptic priest Father Youssef Fanous. Deacon Boghos led the deacons of the Armenian Apostolic Church, namely Deacons Vartan Elmasian, Vartan Keoshgerian and Krikor Setrakian in singing “Ov Hrashali Nakhahark” and “The Creed of Faith,” both in Armenian. Then the Creed of Faith was recited in the Coptic dialect and in English.

The following scripture passage was read by Father Youssef Fanous, 1 Corinthians 12:12-20 and the Gospel reading of John 12:14-26 by Very Reverend Father Avetis Hambardzumyan.

Both deacons and the Parish Pastor of the

Ethiopian Orthodox Church also participated and punctuated their ritual with drums and cymbals.

The homily was delivered by His Grace Bishop Daniel, Primate of the Coptic Church.

He said that *the First Ecumenical Council in Nicaea was in the year 325 AD. There were many reasons, but the main reason was the heresy of Arius, born in Libya, year 250 and died in 336, in Constantinople. A Christian Priest in Alexandria, who believed that “the Son of God (Christ) is not equal to the Father, he went further and said that the Son of God, is not co-eternal or does not co-exist with the Father. Arius also claimed that Christ is not divine but a created being. Arius denied that Christ was “of one substance with the Father.”*

*The reason behind the heresy of Arius was his previous studies under Lucian of Antioch, who introduced him to suspicious teachings of a Gnostic nature.*

*Three members of the First Ecumenical Council were elected to write the Canons, two of them were from the Coptic Orthodox Church, Pope Alexander the 19<sup>th</sup> and his deacon Athanasius. It is significant to mention that the style of the writings of the Canons of the First Ecumenical Council was a similar style of the writings of Athanasius.*

*The famous Athanasius of Alexandria helped formulate the original version of the Nicene Creed (325 C.E.).*

*Arius based his teachings on several Biblical texts.*

*Based on Arius’s above teachings, a great division arose and shook the whole church and the Roman Empire.*

*Pope Alexander the 19<sup>th</sup> and the twenty Coptic Orthodox Bishops and Deacon Athanasius played a significant role in defending the sound faith even before the First Ecumenical Council. Pope Alexander together with 36 Bishops and 44 deacons including Athanasius, called a Synod for the church of Alexandria in the year 320 A.D, and the Synod unanimously agreed on the condemnation of Arius and signed a document to this effect.*

*As churches, to keep the sound faith of Nicaea, we need to endure anything even the external persecution against us.*



*Church Leaders must pay a very significant attention to have a very strong monastic movement and educate the monks in sound doctrine. Saint Anthony the founder of Monasticism went to Alexandria two times to support the sound doctrine and to support Pope Athanasius against Arius.*

*Church Leaders must pay substantial efforts to have a very strong monastic movement for Nuns and consecrated sisters, and educate them the sound doctrine. Arius convinced 700 virgins and consecrated sisters to follow his wrong teachings.*

*For the unity of Churches, it is very significant for Church Leaders to have a direct and continuous communication with each other.*

*For the Unity of the Churches, the Church Leaders need to meet on a regular basis, in a roundtable, to share the challenges facing the Church. It is significant to have regular meetings between the Churches and their representatives, to have one mind in the topic that divides the Church, the Ecumenical Councils can help in this dimension. As well, representatives of Churches must include the youth. In today's world, there are many Atheists, Agnostics, and non-believers. Our mission is to bring them into the loving embrace of Christ so that all may become one flock under one Shepherd.*

*Beloved brothers and sisters in Christ,*

*Today, as we commemorate the 1700<sup>th</sup> Anniversary of the Nicene Creed, we are reminded of the profound truth that unites us: "We believe in one God, the Father Almighty..."*

*May God bless each of you, may Christ dwell richly among us, and may the Holy Spirit guide us ever closer to perfect unity in His love. Amen.*

+ Bishop Daniel



Immediately after the joint prayer, the traditional fundraising dinner took place in the adjacent hall, organised by the NSWEC Fundraising Commission, whose chairman for the past seven years is Deacon Nishan Basmajian. Of the 180 attendees, 50 were Armenians, including Reverend Fathers Avetis Hambardzumyan, Miuron Avedisian, Ashot Abrahamyan, as well as Reverend Krikor Youmshajekian. Bishop Vardan Navasardyan was represented by the Vice-Chairman of the Diocesan Council Mr Stepan Kerkyasharian.

After Deacon Nishan's welcome speech, Father Shenouda Mansour blessed the table, which was lavishly laden with Middle Eastern cuisine.

The evening was hosted by the newly appointed President of the Ecumenical Council Reverend Carmel Ieraci of the Uniting Church.

It is customary to invite a speaker to these fundraising dinners. This year it was Reverend Dr Rod Benson, the newly appointed General Secretary of the Ecumenical Council. In his speech, Reverend Benson chose the topic "The Path of Unity." He asked what was meant by Ecumenism. *"Simply put, Ecumenism is a*





*worldwide movement towards Christian unity and cooperation between different Christian cultures and denominations. The movement aims to overcome Church Divisions, to heal their wounds and to work together in faith, prayer and the preaching of the gospel.”*

*76 years ago, in 1949, a new world had just emerged from the bloodshed and chaos of World War II, when the Anglican theologian Oliver Tomkins wrote... “Simply stated, ecumenism is a global movement toward Christian unity and cooperation among the various traditions and denominations of the Christian Church. The movement seeks to overcome divisions.”*

*He then quoted Christ’s prayer in John 17:21 later believe, in many places and through the centuries up to our own time, and he further prays, “May they all be one, as you, Father, are in me and I in you. May they also be in us, so that the world may believe you sent me”.*

*Continuing, he said, “So the call to pray together, and worship together, and serve together comes from the mouth of Christ and the heart of God. That essential unity was increasingly hard to discern as time passed, and the recovery of that spirit of unity is what inspired the twentieth-century ecumenical movement.” Together we are better.*

The text of Reverend Rod’s speech can be read in the English section of this issue.



This year the two youth representatives who delivered their addresses were Deacon Boghos Keleshian (Armenian Apostolic Church) and Miss Toota Girgis (Coptic Orthodox Church).

In his speech Deacon Boghos mentioned:

*In his work “Azkabadoom” (National History), Patriarch Malachia Ormanian writes the following: “From its beginnings, Christianity developed as the form of a collective body and that collective unity was named **church** which is a **meeting** or **crowd/congregation**, united and linked not only with a doctrine, but also with the crucial elements of worship, customs, and rule”.*

*I often wonder about the theological differences among Christian churches and one question I’d like to pose for you to reflect on is that if our hearts are hardened and our love is decreased toward our brother, in contrary to the second greatest commandment, due to certain theological concepts, doesn’t that indicate our failure in being Christians as we call ourselves?”*

The Deacon

closed his speech with this meaningful question.

Two dancers from the Hamazkaine Armenian Sydney Dance Ensemble, sisters Eugenie and Narod Oranjian, as well as the Sydney Hindi Uniting Church Faith Community Choir entertained the guests. Those lucky enough won valuable raffle prizes in the draw.

The ecumenical atmosphere of fellowship at the Fundraising Dinner was a beautiful continuation of the Ecumenical Prayer Service for Christian Unity.



**Monday 16 June** – The priests of the parishes of Australia and New Zealand took part in an online meeting, with the Primate His Grace Bishop Vardan Navasardyan presiding. Every ordained priest of the Diocese was in attendance. The meeting was held in a warm and constructive atmosphere.

Matters discussed related to organisational clarification and internal development, and the determination of future works within the Diocese.

The main points discussed were:

- Formation of a committee to develop a Code of Practice for the Diocesan Clergy Conference
- Formation of a committee for ritual observances in the Diocese
- Formation of a committee for the development of an organisational format for the Diocesan Parishes
- The process of planning and specifying future steps and tasks.

The meeting was constructive, aimed at the modernisation of Diocesan life,

and the establishment of a more systematic and efficient level of spiritual service.



**Saturday 21 June** – The Concert Hall at The Concourse in Chatswood was filled to capacity with spectators who



had come to celebrate the 25<sup>th</sup> anniversary of the founding of the Hamazkaine Sydney Dance Ensemble. During the evening, 175 dancers from 4 to 18+ years of age presented magnificent dance performances. The folk dances of Kochari of Alashkert, Armeni Bar, Tsirani, Qamin Zana, Totik, Lorke, Msho Aghchik, Karin - Finjan, Nino, Hayastan, Tamzara, Artsakhi Tsnount Em, Erkir Nayiri were performed. Mrs Zani Nazarian-Okgian captivated the audience with her recitation, reciting “The Dance of the Sasuntsis”.

The management of the Ensemble had the beautiful idea of inviting Hamazkaine Arshak

and Sophie Galstaun College students to take part in the program. 64 students, led by teacher Mrs Betty Marshlian and conductor Perry Minassian, performed a series of Armenian songs to thunderous applause from the audience.





Alongside representatives of Armenian organisations, His Grace Vardan Navasardyan was represented by Reverend Father Avetis Hambardzumyan. Reverend Father Miuron Avedisian and Reverend Father Ashot Abrahamyan were also present. Mrs Hanriet Andriasian Chairwoman of the Ensemble's Advisory Board and Mr Kevork Vartanian Chairman of the Hamazkaine Regional Committee delivered their words of appreciation. For the occasion, Bishop Navasardyan had sent his message from Holy Etchmiadzin which was read by Father Hambardzumyan. We publish the English translation in its entirety below. All those who spoke, highly appreciated the vision and meticulous, persistent and selfless work of Harmick Hacobian, who conceived the Ensemble 25 years ago and has assumed its presidency to this day.



**MESSAGE OF HIS GRACE BISHOP VARDAN NAVASARDYAN  
ON THE 25<sup>TH</sup> ANNIVERSARY OF  
THE HAMAZKAINE SYDNEY DANCE ENSEMBLE (ASDC)**

When we look through the By-Laws of the Hamazkaine Armenian Educational and Cultural Association, we come across the following simple yet profound and compelling statement regarding the purpose of Hamazkaine: “The goal of HAMAZKAINE is to preserve, develop and spread Armenian culture and education, with the mission of the survival of Armenia and all Armenians.”

The 25<sup>th</sup> anniversary of the establishment of ASDC, which aims to “preserve, develop and spread Armenian culture,” will be celebrated on three occasions this year.

The establishment of the Ensemble by Harmick Hacobian in collaboration with a group of Hamazkaine members was a resolute commitment to uphold the noble mission of Hamazkaine. The founding group knew very well that Armenian dance would inspire the Armenian youth of Sydney and would make a great contribution to the process of cultural development.

And thus, ASDC, over the course of twenty-five years, has scaled the heights of developing Armenian culture, attracting generations to embrace and cling on to it. One cannot help but be amazed at the achievements of the Ensemble over the past 25 years, the foundation of which took place on foreign shores, managed by volunteers.

It is truly commendable to see the joint participation of the Hamazkaine Galstaun College's Choir in today's concert. This is certainly a praiseworthy initiative which demonstrates two key components of Armenian culture, song and dance, coming together to present to the audience, and a wonderful experience of cultural education to those who perform them.

The jubilee celebrations which begin on June 21 with the "Rhythms of Our Roots", will continue with events on October 26 and November 2. They will stir our souls and make the Rhythms of Armenian Roots audible forever for generations of Australian Armenians.

With best wishes for continued perseverance and success,  
I remain with Fatherly Blessing,

+Bishop Vardan Navasardyan  
Primate  
May 2025

The editorial staff of Paros congratulates the Ensemble on its 25th anniversary and wishes it continued growth.

**Wednesday 25 June** – The topic of the 41<sup>st</sup> online lecture organised by the Diocesan Centre was “Church-State Relations and the Current Issues.” The guest presenter was His Eminence Archbishop Arshak Khachatryan, Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin.

His Eminence gave a brief explanation of the centuries-old relationship between the Mother See and the State, as well as the gradually deteriorating relations after Prime Minister Nikol Pashinyan came to power. On the same day, the arrest occurred of the leader of the “Holy Struggle” movement, His Eminence Archbishop Bagrat Galstanyan, and some of his followers.

Archbishop Khachatryan provided a historical account of how relations gradually deteriorated with the removal of the subject of the History of the Armenian Church from the educational curriculum in 2019, other educational issues, accusations against Holy Etchmiadzin and the church in general for not fulfilling their tax obligations, accusations that the church is meddling in politics which it should not do, accusations that the church is corrupt, that the clergy are blasphemers, and so on. The Archbishop expressed this to be a lie and said that the church fulfils all its tax obligations on time. It remains exempt from taxes for those properties that have a worship significance, for example, holy places that have a history of hundreds or thousands of years. He explained that the church does not enter politics, but its mission is to present demands for the security and well-being of its people and cannot remain silent for the well-being of its nation and people. About corruption, he said that these are pure propaganda slogans that have been thrown out into the open without facts. Everything is open to the state for inspection. That the clergy are profane, he said even though some clergy have made mistakes as human beings, but no criminal charges have been filed against anyone.

Archbishop Khachatryan said that clergymen make mistakes, that is natural, but a clergyman must be DIFFERENT and strive for perfection. Therefore, the goal of this government is to devalue the mission of the church. The Archbishop did not find these statements accidental given that ten days ago, the spiritual leader of Azerbaijan, Allahshukur Pashazade declared that Etchmiadzin is a threat to the region.



Archbishop Khachatryan confirmed that in these difficult days, when the country is threatened by war, the government, instead of uniting the nation, is after dividing it and its goal is to present the church as an anti-state structure. The Prime Minister is showing hatred through public propaganda. The mission of the church is to uphold the dignity of the people.


The Archbishop advised the Diaspora Armenian communities to maintain their connection with the homeland and remind the state that they are not the masters of the

country but its servants, whose duty is to develop it; otherwise, if they are unable to do so, they should resign.

He then went on to answer some questions from the participants.



The Primate His Grace Bishop Vardan Navasardyan, who was still in Holy Etchmiadzin, delivered a closing message where he expressed gratitude to Archbishop Khachatryan, all the participants, and all those who made this event a success. Speaking about Archbishop Khachatryan, he said that His Eminence is the most knowledgeable and experienced person in church-state relations because he has been involved in these matters since year 2000. Bishop Navasardyan, giving a historical overview of the Armenian church-Armenian



kings relations, said that there have been disagreements only when the church has been a pioneer in preserving national values and has raised its voice for those values, something that is its own mission. His Grace clearly explained that the Armenian clergy serves Christ through the people. The feelings of the people belong to the church, as well as their difficulties, therefore the church has an obligation to speak out for those difficulties and work for their solution. He advised that the Australian-Armenian community should have its role and not be indifferent to Armenia and the Armenian Church, *“because we are the church. We have a duty to pray for our homeland and ask the Lord for wisdom for the leadership of our country in their service,”* concluded the Bishop. He then closed the evening with a prayer, after which he set off for Sydney a few hours later.

Below is a brief biography of Archbishop Arshak Khachatryan.

Baptism name Samvel, he was born in 1973 in the village of Voskehad, Armavir.

1990-1996 – He attended the Gevorkian Spiritual Seminary, Holy Etchmiadzin.

2003-2007 – Yerevan State University Law School, where he is certified as a lawyer.

1996, He was ordained a deacon, in 1997 a celibate priest, in 2001, a priest. In 2004, he was ordained Bishop, and in 2023, he was elevated to the rank of Archbishop.

1999 - Acting Editor-in-Chief of the “Etchmiadzin” magazine

2000 - Director of the “Mother See - Dioceses” Office.

2001 until today – Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin.

2003-2005 – Lecturer at the Gevorkian Spiritual Seminary on the subjects of "Interpretation of the Old Testament", "Moral of the Saints" and "Church Music". In 2004, he was the representative of the Mother See in the National Assembly of the Republic of Armenia.

Since 2004, he is a member of the Supreme Spiritual Council.

His Eminence is author of three books.

**Friday 27 June** – In the early morning, more than 50 Armenians gathered in the arrivals hall of Sydney International Airport, some with bouquets of flowers, to joyfully welcome a spiritual figure whom they had known for a long time and who was arriving today to assume the position of Primate of the Diocese. That person was Father Vardan, the former parish pastor (2005-2008) of the Holy Resurrection Church in Sydney, and today, His Grace Bishop Vardan Navasardyan, Primate of the Diocese of the Armenian Church of Australia and New Zealand and Pontifical Legate to India and the Far East.

And finally, His Grace appeared. Greetings, good wishes, tears of joy..



He was greeted by a young lady dressed in Armenian traditional costume, carrying a tray with salt and bread in her hands. His Grace, according to Armenian custom, blessed them. Among those who welcomed him were the priests from the Holy Resurrection and Holy Trinity churches, members of the Diocesan and Parish Councils, former colleagues, friends and acquaintances.

The solemn entrance "*Hrashapar*" to the Holy Resurrection Mother Church which had previously been announced, took place at 8:30 a.m. with the participation of the Reverend Fathers, diaconate of the Holy Resurrection and Holy Trinity Churches, and the faithful community members. It was joyful and commendable to see the presence of a dozen students of the AGBU Alexander School at this service.



After the church service, Bishop Navasardyan, surrounded by the priests, Diocesan and Parish Councillors, and community members, was led to the Diocesan Centre where a reception was held by the Diocesan Ladies Guild.

After a flight of more than twenty hours from



Yerevan via Doha, it was time to rest. However, like all our clergy, who do not know the meaning of tiredness, Bishop Navasardyan proved that he too is of this character. Thus, that same evening, in the hall of the Homenetmen-Antranik chapter, there was a gathering of participants attending the Pan-Homenetmen Games to be held in Armenia and participants of the Homenetmen Scouts

